

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

ԳՅՈՒՄՐԻ՝ ԿՐԿԻՆ ՑԱՎԻ ԵՎ ՎՃՏԻ ՄԱՅՐԱՔԱԴԱԶ



195, Հունվար 2015 թ.

No 195, Jan. 2015

شماره ۱۹۵ بهمن ماه ۱۳۹۳

Այս համարում Չայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արցախ.....	9
3- Արեւմտյան Հայաստան.....	9
4- Միյուտք.....	13
5- Միջազգային.....	15
6- Հասարակական.....	17
7- Խոհեր.....	18
8- Գծանկարչություն.....	19
9- Առածանի.....	19

Պարսկերեն բաժին

1- Ուլքե՛ր են թուրքերը.....	1-2
2- Հայկական ցեղասպանության.....	2-3
3- Լուրեր.....	3-4
4- Հրանդ Մաթևոսյան.....	5



Ճապիկի առաջին էջում՝ Գյումրիի Ավետիսյաններ

Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 195, Հունվար 2015 թ.

No. 195, January 2015

ماهنامه لویس - شماره ۱۹۵ بهمن ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Չատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Չոգովածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

Հայ Ժողովրդի աննախանձելի վիճակը

1-Անկախություն՝...ինաստը կորցրած:

2-Ինքնիշխանություն՝...հնացած բառ:

3-Պետականություն՝...անդունդի հատակում:

4-Իշխանություն՝...եւ կառավարություն՝...ավագակություն:

5-Ազգային մի՛տք...բացակայում է թե՛ Հայաստանում և թե՛ Միյուտքում:

6-Կապիտուլյացիա:

-Ինչպե՛ս է կարողանում զինվորը զենքով դուրս գալ Հայաստանի պաշտպանությունը ապահովող զինվորանոցից:

-Ի՞նչ իրավունքով են Հայաստանում գտնվում ռուս իրավապահները: Միթե՛ չկան հայ իրավապահներ:

-Հայկական հողի վրա կատարված ոճրագործության հեղինակը ինչո՞ւ հայ իրավապահների մոտ չէ:

-Հայաստանցիները չունե՛ն որևէ ազգային ջիղ ու ինքնասիրություն, թշվառականի պես մոմ վառելու փոխարեն, գնան իրենք իրենց ինքնաիշխանությունը հաստատեն: Դահիճին պատժեն:

-Հայաստանյան եւ սփյուռքյան մեղիան չունի՞ մի էպսիլոն ազգային ու մարդկային պատկեր: Երգ ու պարի ծրագրերի փոխարեն հանդես գան վերլուծություններով ու ազգային սուգ հայտարարելով ու ոճրագործության հարցը հետապնդելով:

-Ռուսական օրենքները չեն կարող գործել մի այլ երկրում, այդ թվում նաև Հայաստանում:

-Երբ Ռուսական ռազմաբազան ի վիճակի չէ կառավարել ինքն իրեն (այդպիսի խախտումներ եղել են նաեւ անցյալում), ի՞նչպես է ուզում ապահովել Հայաստանի անվտանգությունը:

Մա չափազանց լուրջ հարց է եւ անպայման կարիք ունի վերանայման:

-Հայ ժողովուրդը գուր հույսեր է փայփայում Օտարերկրյա՝ ուժերի կողմից անվտանգության ապահովման կապացությամբ:

-Կատարված եւ կատարվող այդպիսի դեպքեր վիրավորում են մեր ազգային պատիվն ու զգացմունքները, գոնե սակավաթիվ նրանց մոտ, որոնք դեռևս ունին այդպիսի զգացմունքներ:

-ՀՀ ու Արցախի ՊՆ հավակնությունները չեն բավարարում օրվա պահանջները: Նրանց վախկոտ և անկայուն կեցվածքը պատճառ է դառնում հայ անմեղ զինվորներին: Եթե իսկապես հնարավոր է, պետք է մի լավ հարված հասցնել թշնամուն, որպեսզի ամեն օր մի քանի հարյուր անգամ ոտնձգություն չանի հայկական հողի ու հայ ընտանիքների կյանքի նկատմամբ:

Ո՞ր են մնացել «հեղափոխականները», «Փիղայինները»...

Զգարմանանք, երբ մենք ասել էինք և ասում ենք, որ ազգովի պատրաստ չէինք անկախության վերականգնմանը, քանի որ ազգային ու պետականության ոգին բացակայում է մեր ազգի մտայնությունից:

*Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն-Տրյոնտո
ՀՈՒԿ*

Հայաստան

Գյումրիի դաժան սպանությունը տեղի է ունեցել վաղ առավոտյան. ՔԿ

12.01.2015



Գյումրիում հունվարի 11-ի լույս 12-ի գիշերը տեղի ունեցած դաժան սպանությունը, նախնական տեղեկություններով, եղել է վաղ առավոտյան:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ Քննչական կոմիտեի մամուլի ծառայությունից, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունը վարույթ է ընդունել այսօր՝ հունվարի 12-ին, Գյումրիում տեղի ունեցած 6 անձի սպանության դեպքի առթիվ հարուցված քրեական գործը: Կազմվել է քննչական խումբ, որում ընդգրկվել են ՀԿԳ քննության գլխավոր վարչության եւ Շիրակի մարզային քննչական վարչության քննիչները:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են ինքնաձիգ, ինքնաձիգից արձակված պարկուճներ, պահուսակ՝ փամփուշտներով, ՌԴ զինծառայողի տարբերանշանով զինվորական համազգեստ, զինվորական կոշիկներ:

Պարզվել է, որ դրանք պատկանում են Պերմյակով ազգանունը կրող անձին, որը հանդիսանում է Գյումրիում տեղակայված ՌԴ ռազմական բազայի ժամկետային զինծառայող: Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական, օպերատիվ-որոնողական միջոցառումներ՝ նրան հայտնաբերելու ուղղությամբ: Հարցաքննվել են մի շարք անձինք, նրանց թվում՝ Պերմյակովի զինակիցները, տուժածների հարազատները, հարեւանները:

Նախնական տեղեկություններով՝ Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների սպանությունը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 12-ին՝ վաղ առավոտյան, 06-ի սահմաններում, իսկ մահը վրա է հասել հրազենից արձակված կրակոցների հետեւանքով: Ավետիսյանների ընտանիքից ողջ է մնացել 6 ամսական փոքրիկը՝ Մերյոժա Արմենի Ավետիսյանը, որը կտրող-ձակող գործիքից ստացած վնասվածքներով տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Նշանակվել են դատաբժշկական, դատատորքսիկոքիմիական, դատաձգաբանական փորձաքննություններ:

Կատարվել եւ կատարվում են անհետաձգելի քննչական գործողություններ, օպերատիվ-որոնողական միջոցառումներ՝ դեպքի բոլոր մանրամասները պարզելու, կասկածվողին հայտնաբերելու ուղղությամբ:

Քրեական գործի քննության ընթացքի մասին տեղեկատվություն կտրամադրվի լրացուցիչ:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրազենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների 7 հոգանոց ընտանիքի 6 անդամներին: Սպանվածներից հինգը չափահաս են եղել, մեկը՝ մանկահասակ երեխա: Վեց ամսական մյուս երեխան տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ վիրահատվել է եւ այժմ ծանր վիճակում գտնվում է վերակենդանացման բաժանմունքում: Սպանության հիմնական կասկածյալը ռուս զինվորական Վալերի Պավլի Պերմյակովն է: Ոստիկանությունը որոնում է նրան: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական փորձաքննություններ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ռուսաստանի ԱԳՆ-ն ցավակցություն է հայտնել Գյումրիում զոհերի հարազատներին

12.01.2015



Ռուսաստանի պատկան մարմինները Հայաստանի իշխանություններին ամեն տեսակի անհրաժեշտ աջակցություն են ցուցաբերում, որպեսզի այդ ողբերգության մեղավորները ամենախիստ պատասխանատվության ենթարկվեն: Այս մասին ասված է Ռուսաստանի ԱԳՆ հաղորդագրությունում՝ կապված Գյումրիում 6 հոգուց բաղկացած ընտանիքի անդամների սպանության փաստին:

«Հայ ժողովրդի հետ մենք ցնցված ենք Գյումրի քաղաքի խաղաղ ընտանիքի դեմ սարսափելի հանցագործությամբ: Մեր անկեղծ ցավակցություններն ենք հայտնում զոհերի հարազատներին ու մտերիմներին: Ծանր վիրավոր երեխային շուտափույթ ապաքինում ենք մատրոն», - ասված է հայտարարությունում:

Հիշեցնենք, որ Գյումրիում դաժան սպանության փաստով հարուցված քրեական գործով նախաքննությունը հանձնարարվել է Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությանը: Դեպքի վայրում ոստիկանները հայտնաբերել են Ավետիսյանների ընտանիքի 6 անդամների դիակները՝

Ավետիսյան Մերյոժա Կարապետի
Ավետիսյան Հասմիկ Ռաֆիկի
Ավետիսյան Աիդա Մերյոժայի
Ավետիսյան Արմեն Մերյոժայի
Ավետիսյան Արաբայա Անդրանիկի
Ավետիսյան Հասմիկ Արմենի (2 տ.)



Ընտանիքի մյուս մանկահասակ երեխան՝ 2014 թվականին ծնված Սերյոժա Արմենի Ավետիսյանը, ծանր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է բժշկական կենտրոն: Դեպքի վայրի գնությամբ հայտնաբերվել են 5.45 մմ տրամաչափի պարկուճներ, 1 պահուսակ՝ փամփուշներով, զինվորական կոշիկներ, որոնց վրա գրված է եղել Պերմյակով ազգանունը: Պարզվել է վերջինիս ինքնությունը, եւ միջոցներ են ձեռնարկվում նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Հարուցվել է քրեական գործ, նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական փորձաքննություններ: Կատարվում են անհրաժեշտ քննչական եւ օպերատիվ-որոնողական միջոցառումներ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ: ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Ադվան Հովսեփյանի հանձնարարությամբ՝ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում: Դեպքի վայր են մեկնել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալներ Արամ Թամազյանը եւ Վահագն Հարությունյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ՌԳ պաշտպանության նախարարը ցավակցել է Գյումրիի ողբերգության առիթով

12.01.2015



Ռուսաստանի պաշտպանության նախարար, քանակի գեներալ Սերգեյ Շոյգուն հայաստանցի գործընկեր Սեյրան Օհանյանի հետ հեռախոսազրույցում «իր խորը ցավակցությունն է հայտնել Գյումրիում տեղի ունեցած ողբերգության զոհերի հարազատներին եւ մտերիմներին»:

Նա ընդգծել է, որ «ոչինչ չի կարող արդարացնել անմեղ մարդկանց նկատմամբ նման բռնությունը»:

Ռուսաստանի Պաշտպանության նախարարությունը Հայաստանին խոստանում է «հնարավոր ցանկացած օժանդակություն եւ աջակցություն ցուցաբերել զոհերի հարազատներին»:

Գերատեսչության հաղորդագրության համաձայն, ողբերգության պատճառների հետաքննության համար ռուսական ռազմաբազա ՊՆ հանձնաժողով է ուղարկվել՝ նախարարի առաջին տեղակալ, քանակի գեներալ Արկադի Բախինի գլխավորությամբ:

Հիշեցնենք, որ Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում ողբերգություն է տեղի ունեցել: ՌԳ շարքային զինծառայող Վալերի Պերմյակովը գնդակահարել է Սերյոժա Ավետիսյանին (1961թ.), Հասմիկ Ավետիսյանին (1959թ.), Արդա Ավետիսյանին (1979թ.), Արմեն Ավետիսյանին (1981թ.), Արաքսյա Պողոսյանին (1990թ.), Հասմիկ Ավետիսյանին (ծննդյան թիվը հստակեցվում է): Իսկ 2014 թվականին ծնված Սերյոժա Ավետիսյանը տեղափոխվել է հիվանդանոց:

Նախնական տվյալներով, հանցագործությունը կատարելու մեջ կասկածում են ռուսական 102-րդ ռազմաբազայից փախուստի դիմաց զինծառայողին: Դեպքի վայրի գնությամբ հայտնաբերվել է 5.45 մմ տրամաչափի պարկուճներ, զինվորական կոշիկ, որի վրա նշված է զինծառայող Վալերի Պերմյակովի անունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ռուսական կողմը փորձել է թաքցնել Պերմյակովի դասալքությունը

18.01.2015



Ռուսական կողմը, մասնավորապես, ՀՀ-ում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանի ղեկավարությունը, փորձել է լռել շարքային զինծառայող Վալերի Պերմյակովի դասալքության փաստի մասին: Նման տեսակետ է հայտնել ռազմական շրջանակների ներկայացուցիչը, որը չի ցանկացել նշել իր անունը:

Նրա խոսքով՝ նման փորձի մասին է վկայում այն հանգամանքը, որ դատելով այդ թվում պաշտոնական տեղեկատվությունից, հայկական կողմը ահազանգն տացել է հունվարի 12-ին կեսօրից հետո: Մակայն այդ պահին ռուսական կողմին պետք է հայտնի լիներ զինվորի դասալքության մասին արդեն մի քանի ժամ առաջ, հատկապես, որ զինվորը լքել էր պոստը:

«Տվյալ դեպքում գործ ունենք հանցագործությունը կոծկելու հետ: Ռուսական կողմը կարող էր եւ պարտավոր էր մտածել զինված զինվորի կողմից քաղաքի փողոցներով

անթույլատրելի «գրոսանքի» հնարավոր հետևանքների մասին եւ համապատասխան տեղեկատվությունը փոխանցել հայ գործընկերներին: Դատելով տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից, դա չի արվել»,-ասել է գրուցակիցը՝ հիշեցնելով, որ Ոստիկանության հաղորդագրության համաձայն, ժամը 12.30-ի սահմաններում հիվանդանոցից ոստիկանության բաժին ահազանգ ստացվել, որ Մյասնիկյան-188 հասցեի տանը հրագենային վնասվածքով մարդկանց մարմիններ կան: Այսինքն տեղեկատվությունն ստացվել է ոչ ռուսական կողմից:

Հարցին ի՞նչ նպատակ է հետապնդել տեղի ունեցածի թաքցնելու փորձը, գրուցակիցը պատասխանել է, որ հնարավոր է, ռուսական կողմը փորձել է ինքնուրույն կարգավորել հարցը՝ առանց աղմուկ բարձրացնելու:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրագենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դուստրը: Վեց ամսական Մերյոժա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել եւ տեղափոխվել է հիվանդանոց: Կասկածյալը՝ ռուս զինվորական Վալերի Պավելի Պերմյակովը ձերբակալվեց նույն օրը կեսգիշերին մոտ, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Նրան կալանավորել են եւ մեղադրանք են առաջադրել ՌԴ-Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի (երկուսից ավելի մարդկանց սպանություն) եւ 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դասալքություն՝ ծառայողական զենքով):

«Ղգիսավոր դատախազության մեկնաբանմամբ, նա գտնվում է ՌԴ իրավագրության ներքո եւ դատվելու է ռուսական օրենսդրությամբ: Այս որոշումը հանրային բողոքի լայն ալիք է բարձրացրել, վերջին օրերին բողոքի ակցիաներ եւ մոմավառություններ են եղել Երեւանում, Գյումրիում, այլ քաղաքներում:

Նշենք, որ հունվարի 15-ի երեկոյան, Ազատության հրապարակից եւ հարակից տարածքից ոստիկանական բաժիններ է տարվել 38 հոգի, որոնք մի քանի ժամ անց ազատ էին արձակվել:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Մահացել է 6-ամսական Մերյոժա Ավետիսյանը

19.01.2015



Մահացել է հունվարի 12-ին Գյումրիում սպանված Ավետիսյանների ընտանիքի ամենակրտսեր անդամը՝ 6-ամսական Մերյոժա Ավետիսյանը:

Այս առնչությամբ Առողջապահության նախարարության տարածած հաղորդագրությունում ասվում է.

«Երեւանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տնօրեն Նիկոլայ Դալլաքյանի տեղեկացմամբ՝ երեկ երեկոյան վեց ամսական Մերյոժա Ավետիսյանի առողջական վիճակը կտրուկ վատացել էր:



Հունվարի 19-ին, ժամը 17:02-ին երեխայի մոտ արձանագրվեց կենսաբանական մահ: Չնայած տեղի եւ արտերկրի առաջատար մասնագետների կողմից ձեռնարկված վերակենդանացման շարունակական, երկարատև, անընդմեջ միջոցառումներին՝ ցուցանիշները բարելավել չհաջողվեց, զարգացավ սրտանթալան, թոքային, երիկամային անբավարարություն. անդառնալի փոփոխություններ տեղի ունեցան, որը հանգեցրեց մահվան: «Ձ առողջապահության նախարարությունը խորը ցավակցություն է հայտնում»:



Ավելի վաղ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի գլխավոր տնօրեն Նիկոլայ Դալլաքյանը լրագրողներին հայտնել էր, որ իրենք երեկ լուրջ քննարկել են իրավիճակը եւ միանշանակ արձանագրվել է, որ երեխան այս պահին տեղափոխման ենթակա չէ: «Նույնիսկ առաջին հարկ իջեցնելը կարող է ճակատագրական լինել»,-ասել էր նա:

Հիշեցնենք, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրագենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դուստրը: Վեց ամսական Մերյոժա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել

եւ տեղափոխվել է հիվանդանոց: Նրա վիճակը կայուն ծանր էր:



անվերականգնելին գոնե ինչ-որ չափով լցնելու համար անելիք էր թողնում մեզ: Ավաճի, չստացվեց, չնայած հնարավոր եւ անհնարին բոլոր ջանքերին՝ չստացվեց: Յավակցում եմ Ավետիսյանների հարազատներին, բոլոր գյումրեցիներին, մեր ողջ ժողովրդին: Ճիշտ է՝ ցավակցությունները, որքան էլ հնչեն, չեն փարատելու վիշտը, եւ հետ չեն բերելու կորուստը, բայց պիտի դիմանալ: Պիտի ուժ ու տոկունություն գտնել: Ապրելու ուրիշ բանաձեւ չկա: Պիտի շարունակել ապրել եւ արդար հատուցման հասնել այս բոլոր ցավերի ու այս ոճրագործության համար»:
Լուրեր Հայաստանից - NEWS.am

Բորդյուժա. Գյումրիի ողբերգության հետաքննությունը օբյեկտիվ կանցկացվի

19.01.2015



Կասկածյալը՝ ռուս զինվորական Վալերի Պավելի Պերմյակովը ձերբակալվել է նույն օրը կեսգիշերին մոտ, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Ներկայումս նա գտնվում է ռուսական ռազմակայանում: Նրան կալանավորել են եւ մեղադրանք են առաջադրել Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ (երկուսից ավելի մարդկանց սպանություն) եւ 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դատաբանություն՝ ծառայողական զենքով): Սպանության փաստով քրգործ է հարուցվել նաեւ ՀՀ Քննչական կոմիտեում:

ՀՀ գլխավոր դատախազության մեկնաբանմամբ, նա գտնվում է ՌԴ իրավագործության ներքո եւ դատվելու է ռուսական օրենսդրությամբ: Այս որոշումը հանրային բողոքի լայն ալիք է բարձրացրել, վերջին օրերին բողոքի ակցիաներ եւ մոմավառություններ են եղել Երեւանում, Գյումրիում, այլ քաղաքներում:

NEWS.am

Սերժ Սարգսյանի ցավակցական խոսքը. Հանգավ լույսը

19.01.2015



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ցավակցական խոսքը Գյումրիում սպանված ընտանիքի փոքրիկի՝ Սերյոժա Ավետիսյանի մահվան կապակցությամբ:

ՀՀ նախագահի խոսքում ասվում է.

«Մեզ չհաջողվեց փրկել փոքրիկ Սերյոժայի կյանքը: Չնայած հայ եւ ռուս բարձրակարգ բժիշկների անսահման ճիգերին՝ մենք կորցրինք նրան: Հանգավ լույսը, որը Գյումրիի ոճրագործությունից հետո բոլորիս միակ սփոփանքն էր, որն

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան վստահ է Գյումրիի ողբերգության համակողմանի եւ օբյեկտիվ համատեղ հետաքննության անցկացնելու գործում: Բորդյուժան նման կարծիք է հայտնել պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում:

Բորդյուժան ցավակցություն է հայտնել մահացածների հարազատներին, մտերիներին եւ ողջ հայ ժողովրդին Գյումրիի հայ ընտանիքի ողբերգական սպանության առիթով:

«ՏՍՍՍ»-ի փոխանցմամբ՝ ՀԱՊԿ-ի մամուլի քարտուղար Չայնետդինովը հայտնել է, որ հեռախոսազրույցի ժամանակ նաեւ քննարկվել են ՀԱՊԿ-ի Հավաքական անվտանգության խորհրդի ղեկավարության նստաշրջանի ժամանակ ընդունված որոշումների իրացման հետ կապված հարցերը: Ընդգծվել է դարաբաղյան հակամարտության լարվածության նվազեցման եւ հակամարտության խաղաղ կարգավորման այլընտրանքի բացակայությունը:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրազենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դստերը: Վեց ամսական Սերյոժա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել եւ տեղափոխվել է հիվանդանոց, սակայն դեպքից 7 օր անց հիվանդանոցում մահացել է նաեւ նա:



Այս գործով նույն օրը, կեսգիշերին մոտ ձերբակալվել է ռուս զինվորական Վալերի Պլանյակովը, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Ներկայումս նա գտնվում է ռուսական ռազմակայանում: Նրան կալանավորել են մեղադրանք են առաջադրել ՌԴ-Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ (երկուսից ավելի մարդկանց սպանություն) և 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դասալքություն՝ ծառայողական զենքով): Սպանության փաստով քրգործ է հարուցվել նաև ՀՀ Քննչական կոմիտեում:

ՀՀ գլխավոր դատախազության մեկնաբանմամբ, նա գտնվում է ՌԴ իրավագործության ներքո և դատվելու է ռուսական օրենսդրությամբ: Այս որոշումը հանրային բողոքի լայն ալիք է բարձրացրել, վերջին օրերին բողոքի ակցիաներ և մոմավառություններ են եղել Երևանում, Գյումրիում, այլ քաղաքներում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Սերժ Սարգսյանը պատասխանել է Էրդոհանի նամակ-հրավերին

16.01.2015

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ ի պատասխան Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդոհանի նամակի, որտեղ Թուրքիայի նախագահը Հայաստանի Հանրապետության Նախագահին հրավիրել է ս.թ. ապրիլի 24-ին ներկա լինելու Թուրքիայում Գալիպոլիի ճակատամարտի հարյուրամյակի հիշատակի միջոցառումներին, պատասխան նամակ է հղել, որում, մասնավորապես, ասված է. «Հարգելի պարոն Նախագահ,

Մտացա Գալիպոլիի ճակատամարտի հարյուրամյակի հիշատակի միջոցառումներին մասնակցելու՝ ինձ ուղղված Ձեր հրավերը:

Հիրավի, Առաջին աշխարհամարտը մարդկության պատմության ամենագարհուրելի էջերից է, որ միլիոնավոր անմեղ մարդկային կորուստների և ճակատագրերի խեղման պատճառ դարձավ:

Գալիպոլիի ճակատամարտի մասնակից էր նաև Օսմանյան կայսրության զորքերի հայազգի հրետամավոր, կապիտան Սարգիս Թորոսյանը. սպա, որ նվիրվել էր կայսրության պաշտպանության ու անվտանգության ապահովմանը և հավատարիմ ծառայության ու սիրանքների համար Օսմանյան կայսրության կողմից արժանացել էր ռազմական պարգևների: Մինչդեռ, նույն թվականին իր գազաթնակետին հասած՝ Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի նկատմամբ նախապես ծրագրված և

իրականացված զանգվածային ջարդերի ու բռնի տեղահանման ալիքը չըջանցեց անգամ Սարգիս Թորոսյանին: Ցեղասպանությանը զոհ գնացած մեկուկես միլիոն հայերի թվում էին նրա ծնողները, ովքեր դաժանաբար սպանվեցին, իսկ քույր մահացավ Սիրիայի անապատում:

Հենց նախադեպը չունեցող այդ կոտորածի արդյունքում էր, որ Ռաֆայել Լեմկինը ստեղծեց «ցեղասպանություն» եզրույթը, և դրա անպատժելիությունն էր, որ հող նախապատրաստեց Հոլոքոստի և Ռուանդայում, Կամբոջայում ու Դարֆուրում ցեղասպանությունների համար:

Ըստ Ձեզ՝ Գալիպոլիի մարտերը ոչ միայն Թուրքիայի, այլև ողջ աշխարհի համար պատերազմից ծնունդ առած բարեկամական հարաբերությունների առանձնահատուկ օրինակ են, իսկ ճակատամարտի դաշտը՝ պատերազմի դաժը ժառանգության մասին հիշեցնող խաղաղության և բարեկամության հուշարձան: Մի կողմ թողնելով բոլորին քաջ հայտնի Գալիպոլիի ճակատամարտի նշանակությունը կամ Թուրքիայի վիճահարույց դերակատարությունը Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում՝ անհրաժեշտ է հիշել, որ խաղաղությունը և բարեկամությունն առաջին հերթին պետք է հիմնված լինեն սեփական անցյալի հետ առերեսման խիզախության, պատմական արդարության, ինչպես նաև համամարդկային հիշողության՝ ոչ թե ընտրովի, այլ ամբողջական ճանաչման վրա:

Ավանդ, Թուրքիան շարունակում է ժխտողականության իր ավանդական քաղաքականությունը և տարեցտարի «կատարելագործելով» պատմության աղճատման իր գործիքակազմը՝ Գալիպոլիի մարտերի հարյուրամյակն այս տարի առաջին անգամ նշում է ապրիլի 24-ին, այն դեպքում, երբ դրանք սկսվել են 1915 թվականի մարտի 18-ին և շարունակվել մինչև 1916 թվականի հունվարի վերջը, իսկ դաշնակիցների ափսհանման օպերացիան՝ Գալիպոլիի ցամաքային մարտերը սկսվել են ապրիլի 25-ին: Ինչ նպատակ է սա հետապնդում, եթե ոչ համաշխարհային հանրության ուշադրությունը Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումներից շեղելու պարզունակ նպատակ: Մինչդեռ, մինչև հիշատակի միջոցառում նախաձեռնելը, Թուրքիան շատ ավելի կարենոր պարտականություն ուներ սեփական ժողովրդի և ողջ մարդկության հանդեպ, այն է՝ Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը:

Ուստի, խորհուրդ կտայի համաշխարհային խաղաղությանն ուղղված Ձեր կոչերում չմոռանալ Հայոց ցեղասպանության ճանաչման ուղերձ հղել աշխարհին՝ ոգեկոչելով մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Յուրաքանչյուրիս պարտքն է գալիք սերունդներին փոխանցել խեղաթյուրումից զերծ իրական պատմությունը՝ այդ կերպ կանխելով ոճրագործությունների կրկնությունն ու հող նախապատրաստելով ազգերի, հատկապես հարեւան ազգերի միջև մերձեցման և հետագա համագործակցության համար:

Հ.Գ. Ձերդ Գերագանցություն, դեռևս մի քանի ամիս առաջ հրավիրել եմ Ձեզ Երևան՝ 2015 թվականի ապրիլի 24-ին միասին հարգելու Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակը: Մեզ մոտ ընդունված չէ հյուրընկալվել հրավիրվողին՝ առանց սեփական հրավերի պատասխանը ստանալու»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ՀՀ-ում ռուսական ռազմարագան կհամարվի պայմանագրային զինծառայողներով

20.01.2015



Հայաստանում տեղակայված 102-րդ ռուսական ռազմարագայի անձնակազմը հաջորդ տարվա զարնանից կհամարվի բացառապես պայմանագրային զինծառայողներով, «Ինտերֆաքս»-ին հաղորդել է ՌԴ զինված ուժերի Գլխավոր շտաբը: «2016թ. զարնանը վերջին զորակոչիկները կլքեն Հայաստանում գտնվող ռուսական 102-րդ ռազմարագան», - հայտարարել է գործակալության գրուցակիցը:

Գլխավոր շտաբի ներկայացուցիչը ընդգծել է, որ այդ որոշումն ընդունվել է դեռ անցած տարի եւ կապված չէ Գյումրիի ողբերգական իրադարձությունների հետ: Գործակալության գրուցակիցը հիշեցրել է, որ 2014թ. դեկտեմբերից Տաշիկստանում տեղակայված 201-րդ ռուսական ռազմարագան հավաքագրվում է բացառապես պայմանագրային զինծառայողներով: Նրա խոսքով՝ օտարերկրյա ռուսական ռազմարագաներ ուղարկված զինծառայողների բարոյահոգեբանական որակների ստուգումն իրականացվում է ռազմական շրջանների հավաքակետերում:

Հիշեցնենք, որ Ռուսաստանի 102-րդ ռազմարագան տեղակայվել է 1995 թվականին Գյումրիում: Իրականացնում է մարտական հերթապահություն ԱՊՀ ՀՕՊ Միասնական համակարգի շրջանակներում: Պայմանագիրը նախապես կնքվել էր 25 տարի ժամկետով, որից հետո 2010 թվականին ՌԴ ռախագահ Գմիտրի Մեդվեդևի այցի ժամանակ այն երկարաձգվել է եւս 49 տարով՝ 2044 թվականը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ՄԳՀԿ-ն կոչ է անում դուրս գալ բանակցային գործընթացից

12.01.2015

Մ.Գ. Հնչակյան կուսակցության Հայաստանի վարչությունն իշխանություններին կոչ է անում դուրս գալ բանակցային գործընթացից:

Կուսակցության տարածած հայտարարության մեջ ասվում է. «2015 թ-ի սկզբից Ադրբեջանը կրկին շարունակում է լարվածության անն ու արկածախնդրությունը Հայաստանի եւ Արցախի սահմաններում: Ճիշտ է, հակառակորդի բոլոր գործողություններին մեր Չինված Ուժերը տալիս են շատ խիստ պատասխան, սակայն պաշտոնական Բաքվի

արկածախնդիր գործողությունների հետեւանքով զոհվում են նաեւ մեր զինծառայողները: Ավելին, Ադրբեջանը շարունակում է ամեն օր ավելի մեծ սադրանքների դիմել՝ օգտագործելով անօդաչու սարքեր եւ տարբեր տրամաչափի զենքեր՝ այս կերպ խախտելով իր իսկ կողմից 1994 թ-ին խնդրած զինադադարը: Չնայած առկա իրավիճակին՝ միջազգային հանրության կողմից իբրեւ միջնորդ մանդատ ստացած ԵԱՀԿ Մինսկի խումբն ուղղակի չի տիրապետում իրավիճակին՝ ոչ մի կերպ չկարողանալով ազդել պաշտոնական Բաքվի գործողությունների վրա:

Ելնելով վերոնշյալից՝ Մոցիայ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը կոչ է անում Հայաստանի իշխանություններին դուրս գալ բանակցային գործընթացից՝ պահանջելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներին իրական ճնշում գործադրել պաշտոնական Բաքվի վրա՝ սադրանքների չդիմելու պահանջով: Անտրամաբանական է Հայաստանի մասնակցությունը բանակցային գործընթացին, երբ սահմանին Ադրբեջանը շարունակում է իր արկածախնդիր գործողությունները»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ինչո՞ւ են լուրս ԵՏՄ երկրները. Կոմանդոսը՝ Ադրբեջանի գործողությունների մասին

12.01.2015



Ադրբեջանը երբեք չի կարող հարձակվել մեր վրա, խաղաղ բնակիչների վրա հարձակվելով ռամիլաժարովական քայլ է անում՝ փորձելով ստեղծել լարվածություն: Այս մասին **NEWS.am**-ի թղթակցի հետ զրույցում ասաց Արցախյան պատերազմի հերոս, զեներալ-լեյտենանտ Արկադի Տեր-Թադեոսյանը՝ Կոմանդոսը:

Նրա խոսքով՝ ինչպես Ադրբեջանն է հանցագործ, այնպես էլ Ֆրանսիայում լրագրողներին սպանողը, եւ եթե այնտեղ 2 մարդ է, այստեղ մի ամբողջ պետություն է, կառավարություն: Կոմանդոսը նշեց, որ Հայաստանը հունվարի 1-ից մտել է ԵՏՄ, հետեւաբար մեր դաշնակից երկրները պետք է հայտարարությամբ հանդես գան, քանի որ այդ ոտնձգությունը նաեւ իրենց դեմ է: «Ադրբեջանը հարձակվում է Հայաստանի վրա, հիմա Հայաստանը մտել է ԵՏՄ, ստացվում է, որ Ադրբեջանը Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի դեմ է հարձակում, իսկ իրենք ձայն չեն հանում, չեն ասում՝ մեր դաշնակիցն է, չի կարելի, ԵՏՄ անդամ երկրները հայտարարության պետք է հանդես գան, բայց հիմա կարծես իրենց համար միեւնույն է», - ասաց Կոմանդոսը:

Արկաղի Տեր-Թադեոսյանը նշեց, որ սահմաններին լարվածությունն միշտ էլ կլինի, բանակն էլ մնում է բանակ, այնտեղ տոնական օր, կերուխում, հարբած մարդ չկա: Նա նշեց, որ Ադրբեջանը շատ «նազիկ» է, ոտնահարում է բոլոր միջազգային նորմերը:

Նշենք, որ տոնական օրերին Ադրբեջանը ինտենսիվորեն խախտել է հրադադարի ռեժիմը, երկու կողմից էլ այս օրերին եղել են բազմաթիվ զոհեր: Իսկ վերջին դեպքն այն էր, երբ Հայոց բանակի արագ արձագանքման համապատասխան ստորաբաժանումը դարանակալել եւ չեզոքացրել է Հայաստանի պետական սահմանը խախտած դիվերսիոն խմբի գործողությունները: Հակառակորդի դիվերսիոն խմբի մի անդամի դիակը գտնվում է միջդիրքային տարածքում: Ցավոք, փոխարածգության ընթացքում զոհվել է նաև տարածքում գտնվող հովիվ Սերյոժա Նիկոլայի Սարգսյանը (ծնված 1935 թ.):

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Վախճանվել է վաստակավոր արտիստ Էդուարդ Բաղդասարյանը

07.01.2015

Հունվարի 6-ին 87 տարեկանում կյանքից հեռացել է Հայաստանի վաստակավոր արտիստ, միջազգային եւ համամիութենական մրցույթների ու փառատոնների դափնեկիր, երգիչ Էդուարդ Սերգեյի Բաղդասարյանը:

1954 թվականից Էդուարդ Բաղդասարյանը Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ րալետի ազգային ակադեմիական թատրոնի առաջատար մենակատարներից էր: 1968թ. լինելով Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի մեներգիչ՝ համերգներով հանդես է եկել Խորհրդային Միությունում եւ արտասահմանյան տասնյակ երկրներում՝ բարձր կատարողական վարպետությամբ ներկայացնելով հայկական արվեստը:

Հայաստանի կառավարությունը, գնահատելով Էդուարդ Բաղդասարյանի կատարողական արվեստը, նրան պարգևատրել է պետական բարձրատիճան շքանշաններով եւ մեդալներով:

Էդուարդ Սերգեյի Բաղդասարյանի հոգեհանգիստը տեղի կունենա հունվարի 8-ին ժամը 17:30-ից մինչեւ 19:00-ն, Մայրաթիայի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում (Սերաստիայի փ., Շահումյանի հուշարձանից աջ):

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հայկական կողմի գործողությունները լինելու են ավելի անողոր. ՊՆ խոսնակ

23.01.2015

Հայկական կողմի գործողությունները լինելու են ավելի անողոր: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Հայաստանի պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը:

«Իրադրությունը ՀՀ եւ ԼՂՀ սահմաններին մնում է լարված, հակառակորդը կորուստներ է կրում, սակայն հաշվի չի նստում դրանց հետ: Հայկական կողմի գործողությունները լինելու են ավելի անողոր ու դրանց հետևանքները արդեն ոչ մի սահմանափակումով հնարավոր չի լինելու թաքցնել», - գրել է նա:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ այսօր՝ հունվարի 23-ի առավոտյան ժամը 9:00-ի սահմաններում ադրբեջանական բանակի հատուկ նշանակության ստորաբաժանումները հարձակվում են իրականացրել Տավուշի մարզի Բերդի

տարածաշրջանի մարտական դիրքերից մի քանիսի ուղղությամբ:



Հայկական բանակի համապատասխան ստորաբաժանումների կողմից ժամանակին հայտնաբերվելով մարտ է սկսվել, որը տևել է շուրջ կես ժամ: Հակառակորդը կորուստներ կրելով եւ մարտական խնդիրը չկատարելով հետ է շարժվել, սակայն ցավոք հայկական կողմը ունի երկու զոհ եւ վիրավորներ: Չոհվել են լեյտենանտ Կարեն Արարատի Գալստյանը եւ շարքային Արտակ Վաղարշակի Սարգսյան:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցը

23.01.2015



Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հարցազրույց է տվել 2rd.am-ին, որտեղ անդրադարձել է Գյումրիի վերջին դեպքերին եւ տնտեսական խնդիրներին:

Հարցազրույցը ներկայացնում ենք ստորև.

Պարոն նախագահ, առաջին հերթին անդրադառնանք Գյումրու ողբերգությանը: Բառացիորեն այն պահից, ինչ մարդասպանին կալանավորեցին, Գյումրիում դժգոհության մեծ ալիք բարձրացավ: Չգացմունքային ծայրահեղ լարվածության մթնոլորտում բախումներ տեղի ունեցան ոստիկանական ուժերի հետ: Հայտնի է, որ այդ ամենի, ինչպես եւ հիմա անընդհատ ահազնացող դժգոհության պատճառը երկու անպատասխան հարցերն էին. ո՞ր երկրի օրենքներով պետք է դատվի մարդասպանը եւ ո՞ր պետության տարածքում պետք է կրի իր պատիժը: Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է անեին իշխանությունները այդ իրավիճակում:

Գյումրիում կատարված ոճրագործությունը, որ ցնցեց ամբողջ Հայաստանը, ապշեցնում է իր դաժանությամբ: Ակնհայտ էր, որ մարդկանց վրդովմունքը կարող է վերածվել զանգվածային գործողությունների՝ անկանխատեսելի հետևանքներով: Դա

կանխելու համար անհրաժեշտ էին իշխանությունների կայծակնային առաջանցիկ գործողությունները: Եվ առաջին հերթին՝ միանշանակ հավաստիացումներն առ այն, որ ոճրագործությունը կհետաքրքրվի հայաստանյան իրավապահ մարմինների կողմից ու հանցագործը կկանգնի << դատարանի առաջ (առավել եւս, որ մենք ունենք նման որոշման նախադեպ՝ 1999 թվականին): Վստահ եմ, որ դա ուղղակի անհրաժեշտ էր ինչպես հայկական, այնպես էլ ռուսական կողմին, քանի որ այդպիսով կկանխվեին բոլոր փորձերը դիտարկելու հայ-ռուսական հարաբերությունները՝ կոնկրետ ողբերգական դեպքի համատեքստում: Մեր պաշտոնյաների լողոված, իրարամերժ եւ շփոթված հայտարարությունները յուր լցրեցին կրակի վրա, եւ առանց այդ էլ լարված իրավիճակին ազգային նվաստացման երանգ հաղորդեցին: Իսկ դա արդեն պայթյունավտանգ համադրություն էր եւ, ցավոք, մարդկանց զայրույթը թափվեց հայ ոստիկանների վրա: Այսպես թե այնպես, Գյումրիում տեղի ունեցածը սարսափելի ողբերգություն էր: Ես եւ իմ ընտանիքը խորապես ցնցված ենք եւ կիսում ենք բոլորի վիշտը:

Դրամի փոխարժեքի կտրուկ անկումը, որ տեղի ունեցավ անցած տարեվերջին, իսկական շոկ առաջացրեց: Ազգային արժույթի այսպիսի արժեզրկում <այաստանում վաղուց չէր եղել: Կառավարության ներկայացուցիչները տեղի ունեցածը բացատրեցին աշխարհաքաղաքական պատճառներով, մասնավորապես՝ ռուբլու եւ նավթի գների անկմամբ, հակառուսական պատժամիջոցների հետեւանքներով եւ այլն: Ի՞նչ եք կարծում, իրո՞ք այսպես անվանվող «սեւ» դեկտեմբերը պայմանավորված էր բացառապես արտաքին գործոններով: Համարժեք էին արդյոք իշխանությունների գործողությունները ստեղծված իրավիճակին: Եվ պե՞տք է արդյոք սպասել դրամի հետագա արժեզրկմանը:

Վերջին 5 տարիներին սա արդեն երկրորդ դեպքն է: Իհարկե, շատ հեշտ է ամեն ինչ բարդել արտաքին գործոնների վրա եւ ներկայանալ որպես աշխարհաքաղաքական գործընթացների գոհ: 1998 թվականի օգոստոսի դեֆոլտի ժամանակ ռուսական տնտեսությունը շատ ավելի վատ վիճակում էր: Այն 6 տոկոսի անկում ապրեց, իսկ ռուբլին դոլարի նկատմամբ էժանացավ 3 անգամ: Սա շատ ավելին է, քան հիմա եւ, բացի այդ, ներկայումս Ռուսաստանը արտարժույթի եւ ոսկու պատկառելի պահուստներ ունի, ինչը բացառում է երկրի դեֆոլտը: Բայց նույնիսկ այդ պայմաններում հայկական դրամը պահպանեց կայունությունը, թեեւ այն ժամանակ <այաստանի տնտեսությունն ու բանկային համակարգը շատ ավելի թույլ էին:

Բնական է արտաքին գործոնները նշանակություն ունեն, բայց անցած տարվա դեկտեմբերին դրանք ոչ թե մեր տնտեսության հիվանդանալու պատճառ դարձան, այլ ի ցույց դրեցին արդեն առկա հիվանդությունները: Դրամի եւ ռուսական ռուբլու վարքի այդպիսի համահարաբերականություն չպետք է լիներ: Սակայն, մեզանում գերիշխող տրամադրությունների եւ բացասական սպասումների պարագայում փոխարժեքի տատանումների վրա նույնիսկ աննշան սպեկուլյացիաները կարող են մարդկանց խուճապային վարքի պատճառ դառնալ եւ որոշիչ դերակատարություն ունենալ, նույնիսկ՝ թվացյալ ֆինանսական կայունության պարագայում:

Ֆորմալ տեսանկյունից դրամի փոխարժեքի կայունության պատասխանատուն << Կենտրոնական բանկն է, որն այդ օրերին կայունացմանն ուղղված որոշակի ջանքեր էր գործադրում՝ իր լիազորությունների շրջանակում: Բայց դեկտեմբերյան իրավիճակում դա ակնհայտորեն բավարար չէր: Իշխանության բոլոր ինստիտուտների հրատապ եւ համակարգված գործողություններ էին անհրաժեշտ, ազդեցության բոլոր՝ մոնետարային, ֆիսկալ եւ վարչական գործիքների կիրառմամբ: Դատելով արդյունքներից, այդ գործողությունները ուշացած ու թերի են եղել: Տնտեսագետների շրջանում տարածված կարծիք է, որ

«Ճգնաժամին իշխանությունների համբավը եւ կառավարչական արդյունավետությունը հաճախ ավելի կարեւոր են, քան հիմնարար գործոնները»:

Որպես բացասական գործոն հիշատակեցիք նաեւ նավթի գնի անկումը: Ընդհակառակը: Նավթ ներմուծող երկրները շահում են գնանկումից: Էժան բենզինը եւ դիզվառեյիքը լավ խթան են տնտեսության աճի համար, ու կարող են կոմպենսացնել Ռուսաստանից եկող մասնավոր տրանսֆերտների նվազման կորուստները, հաշվի առնելով էժան էներգակիրների մեծ մուլտիպլիկատիվ էֆեկտը տնտեսության վրա: Եթե, իհարկե, էներգակիրների շուկայում առողջ մրցակցություն կա /բենզինի գինը <այաստանում՝ բացառապես սուբյեկտիվ գործոն է, որ արտացոլում է շուկայի մենաշնորհացման աստիճանը/:

Ի դեպ, հաշվի առնելով համաշխարհային տենդենցները, կարող է վերանայվել նաեւ երկիր մատակարարվող գազի գինը, եթե, իհարկե, թույլ կտա վերջերս «Գազպրոմի» հետ ստորագրված խնդրահարույց պայմանագիրը:

Ի՞նչ է լինելու մեր դրամի հետ: Դրամի փոխարժեքն արտացոլում է երկրի տնտեսության եւ վճարային հաշվեկշռի ընդհանուր վիճակը: Դրանց վատթարացումը էժանացնելու է դրամը, բարելավումը՝ ամրապնդելու է այն: Դրամը չի կարող ապրել իր սեփական կյանքով՝ ընդհանուր տնտեսությունից կտրված: Ամեն դեպքում, փոխարժեքի կտրուկ տատանումներն անթույլատրելի են. դրանք վտանգում են երկրի ֆինանսական համակարգը, խաթարում վստահությունը ազգային արժույթի նկատմամբ եւ պակասեցնում մեր քաղաքացիների գրպանի պարունակությունը:

Անցած տարի հարցազրույցներից մեկում կանխատեսել էիք, թե երկիրը մտնում է բացասական սպասումների շրջան: Այդ սպասումներից որոշները, ցավոք, իրականություն են դարձել: Բացի այդ, ընդամենը մի քանի օր առաջ «Moody's» գործակալությունը իջեցրել է <այաստանի սուվերեն վարկանիշը եւ փոխել կանխատեսումը՝ գնահատելով այն որպես «ճեզափով»: Ինչպե՞ս եք այսօր գնահատում <այաստանի տնտեսական վիճակը մոտ ապագայում:

Ցավոք, որեւէ հուսադրող բան ասել չեմ կարող: Եթե տնտեսական քաղաքականությունն անփոփոխ մնա, ապա բոլորովին անհասկանալի է, թե ինչի հաշվին պետք է բարելավվի դրավիճակը, կամ ինչը կարող է դառնալ տնտեսության աճի եւ դրա արդյունավետության բարձրացման շարժիչը: «Moody's» գործակալության կողմից <այաստանի սուվերեն վարկանիշի նվազեցումը էլ ավելի կթանկացնի մեզ համար արտաքին փոխառությունները, առավել եւս՝ մեծ արտաքին պարտքի պարագայում: Միջնաժամկետ ապագայում ԵՏՄ տնտեսությունը լինելու է ռեցեսիայի մեջ, այնպես որ շատ դժվար է լինելու այնտեղ որեւէ նշանակալի դերակատարում ստանձնել: Խիստ արժեզրկված ռուբլին լրջորեն կփոխի Ռուսաստանի հետ առևտրի կառուցվածքը՝ ոչ հօգուտ մեր ապրանքների: Ռուսաստանից լուրջ ներդրումների հավանականությունը ցածր է. պատժամիջոցների պատճառով իրենք իսկ խնդիր ունեն արեւմտյան վարկերի վերաֆինանսավորման հետ: Արեւմտյան ընկերությունների համար ԵՏՄ-ին անդամակցելու պատճառով մենք առանձնապես գրավիչ չենք: Պարզ չէ, թե ինչ է կատարվելու մեր եւ Իրանի միջեւ առևտրի ծավալների հետ: Գուճավոր մետաղների համաշխարհային գներն, ըստ կանխատեսումների, չեն անելու, այլ՝ թերեւս հակառակը: << Բանկերի համար նորմատիվների վերջերս կիրառված խստացումը կերբի փոխառվող գումարների թանկացման, իսկ դա նշանակում է, որ բիզնեսի վարկավորումն էլ կթանկանա: Իսկ շինարարության մասին՝ այսպիսի մակրոտնտեսության, բնակչության արտահոսքի եւ անկումային տրամադրությունների պարագայում չենք կարող նույնիսկ երագել: Տնտեսության մենաշնորհացումը ահագնանում է, ներդրումների ծավալները կայուն կերպով նվազում են, ներդրումային ակտիվությունը դեգրադացվում է: Քաղաքական մենաշնորհի պահպանման

պարագայում ներքաղաքական իրավիճակը չի առողջանալ: Առանց արմատական փոփոխությունների չափազանց դժվար կլինի լուծել այս բազմաթիվ խնդիրները: Բացի ճառերից այն մասին, թե ամեն ինչ լավ է կամ ամեն ինչ լավ կլինի, պաշտոնյաներից որեւէ ծրագրային խոսք չենք լսում: Ակներես է, որ իշխանությունների եւ հասարակության երկրում ստեղծված իրավիճակի վերաբերյալ գնահատականը տրամագծորեն տարբեր է, եւ ուրեմն կամ իշխանությունը, կամ հասարակությունը չի կարողանում համարժեք ընկալել իրականությունը: Գուցե իշխանությունները իրոք կարծում են, որ ամեն ինչ կարգին է, կամ էլ իրենք իրենց համոզել են, թե որեւէ բան հնարավոր չէ փոխել:

Երկու դեպքերն էլ լավատեսության տեղ չեն թողնում:

Ինքնաբերաբար հարց է ծագում, ի՞նչ է պետք անել իշխանություններին՝ տնտեսական այս ծանր իրավիճակից դուրս գալու համար:

Առաջին հերթին՝ ընդունել հիմնարար խնդիրների գոյությունը եւ անկեղծ երկխոսության տրամադրվել հասարակության ու բիզնեսի հետ՝ երկրում ստեղծված իրավիճակի եւ ճգնաժամից դուրս գալու ուղիների մասին: Իշխանության բոլոր գործողությունների հաջողության կարելուորագույն պայմանը վստահությունն է, որն այսօր գործնականում բացակայում է: Երկրին անհրաժեշտ են արմատական փոփոխություններ, բայց խոսքը հաստատ սահմանադրական ռեֆորմների մասին չէ: Չէի ուզենա հերթով թվարկել բոլոր ակնհայտ ու անհրաժեշտ քայլերը: Հայաստանում եւ կոնկրետ՝ կառավարությունում, իմ կարծիքով, քիչ չեն այն մարդիկ, որոնք առնվազն հասկանում են, թե ինչ է պետք անել առաջին հերթին: Հաջողության հասնելու ճանապարհին ամենամեծ խոչընդոտը կլինի քաղաքական էլիտայի տնտեսական շահերի բախումը երկրի երկարատե շահերի հետ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությունը կֆինանսավորի Արարատի մարզի դպրոցները

19.01.2015

2015թվականի հունվարի 1-ից Հայաստանում պաշտոնապես բացվել է Ճապոնիայի դեսպանությունը (նստավայրը՝ ք. Երեւան, Ցիտադել Բիզնես Կենտրոն, Տեղյան փողոց 105/1, տարածք 9, 5-րդ հարկ, (գրասենյակ # 501)), որնառաջիմ ղեկավարում է դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար պարոն Կենիչիրո Մասամեն: ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությունը հունվարի 21-ին ժամը 12:00-ին կնքելու է Արարատի մարզի դպրոցներին սարքավորումներ տրամադրելու վերաբերյալ գրանտային պայմանագիր «Չարագցում եւ բարեկեցություն» ՀԿ-ի հետ: Այդ առիթով հունվարի 21-ին Երեւան է ժամանելու Ճապոնիայի ԱԳՆ փոխնախարար պարոն Մինորու Կիուչին, ով ներկա կլինի Պայմանագրի ստորագրման արարողությանը:

Պայմանագրի ստորագրմանը ներկա են լինելու նաեւ.

- Կարինե Հարությունյան ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ
- Ռուբիկ Աբրահամյան Արարատի մարզպետ
- ԻլիչԾաղյան Արարատի մարզպետի տեղակալ
- Ռուզան Խոջիկյանը Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ, JICA) ծրագրի համակարգող
- Արիսիկո Հասեգավա Հայաստանում ճապոնացիների ասոցիացիայի նախագահ

Պայմանագրի ստորագրման արարողությունը տեղի կունենա հունվարի 21-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արցախ

Ուրուզվայի ԱԳ նախարարը կոչ է անում ճանաչել Լեռնային Ղարաբաղը

06.01.2015



Հունվարի 4-ին ՀՅԴ Բյուրոյի անդամ Մարիո Նաբանդյանն ու Հայ Դատի հանձնախմբի անդամները հանդիպում են ունեցել Ուրուզվայի ԱԳ նախարար Լուիս Ալմագրոյի հետ: Հանդիպման ընթացքում արծարծված հարցերի թվում քննարկվել է նաեւ իրավիճակը Հարավային Կովկասում եւ Ադրբեջանի կողմից զինադադարի խախտման բազմաթիվ դեպքերը: Նախարարը դատապարտել է Ադրբեջանի վարքը: Նախարար Ալմագրոն կոչ է արել միջազգային հանրությանը՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ նրա ինքնորոշման իրավունքը, նաեւ վերահաստատել է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության սկզբունքը 1918թ. մայիս-1920թ. դեկտեմբեր անկախացած Հայաստանի Հանրապետության սահմանների համաձայն: Նշենք, որ դեռեւս 2011թ. Ուրուզվայի ԱԳ նախարարը հրապարակային հայտարարել էր, թե Ուրուզվայում քննարկվում է Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արեւմտյան Հայաստան

Արք.Աթեշյանը սխալ է համարում օտար երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը

08.01.2015



Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ արք. Արամ Աթեշյանը հայտարարել է, թե անհասկանալի է, թե ինչու են օտար երկրների խորհրդարանները օրենքներ ստեղծելու փոխարեն պատմական խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունում:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Ստամբուլի քաղաքապետարանի մշակութային և սոցիալական հարցերով վարչության եւ մի շարք թուրքական կազմակերպությունների կողմից հայ-թուրքական հարաբերություններին նվիրված կոնֆերանսին Պոլսոս հայոց պատրիարքական փոխանորդ արք. Արամ Աթեշյանը հայտարարել է, թե վնասվածք ստացած հայ եւ թուրք ժողովուրդները պետք է ձեռք-ձեռքի քայլեն եւ նույնիսկ պետք է վազեն դեպի առողջ ապագա:

«Իսկ այդ վնասվածքները բուժող օտար բժիշկները ավելի են խորացնում վնասվածքը: Մասնավորապես, օրենքներ ընդունելու իրենց գործը մի կողմ են թողել եւ մասնագետ չլինելով հանդերձ պատմական խնդիրների հետ կապված որոշումների ընդունման հիմնարկների են վերածվել, ինչը հասկանալի անհնարին է:

Այդ խորհրդարաններին պետք է հարցնել. եթե ձեր արածը ճիշտ է, ինչու եք 100 տարի սպասել, իսկ եթե ճիշտ չէ, ինչու եք պնդում եւ նախադեպ ստեղծում: Եկել է ժամանակը, որ Հայկական հարցը միջազգային հարթակներում որպես խաղաթղթերի կապուկի ջոկեր օգտագործվելուն վերջ տրվի», -ասել է արք. Արամ Աթեշյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Մենք առանց իսկ կասկածի ճանաչում ենք Հայոց ցեղասպանությունը. քուրդ առաջնորդ

19.01.2015



Թուրքիայի քրդական Ժողովուրդների դեմոկրատարական կուսակցության առաջնորդ Սելահաթին Դեմիրթաշը կրկնել է, որ իրենք առանց իսկ կասկածի ճանաչում են Հայոց ցեղասպանությունը:

Թուրքական CNNturk-ի եթերում Սելահաթին Դեմիրթաշը պատասխանել է բազմաթիվ հարցերի, այդ թվում Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված հարցին:

«Մենք առանց իսկ կասկածի ճանաչում ենք Հայոց ցեղասպանությունը: Իհարկե, Հայոց ցեղասպանության մեջ քրդերն էլ, մյուսներն էլ դերակատարում ունեցել են, սակայն քաղաքական կամքը եղել է Էնվեր եւ Թալեթի փաշաների գլխավորած երիտթուրքական կուսակցությանը: Եթե Թուրքիան տեր է կանգնում Օսմանյան ժառանգության, թող դրան էլ տեր կանգնի, եթե ոչ՝ ապա թող առերեսվի այդ ողբերգության հետ»,-ասել է Սելահաթին Դեմիրթաշը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքիայում 8 տարի առաջ այս օրը սպանվեց Հրանտ Դինքը. համառոտ ակնկարկ

19.01.2015



Այսօր՝ հունվարի 19-ին լրանում է Ստամբուլի հայկական «Ակոս» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության 8 տարին: Նա Թուրքիայի ամենահայտնի հայերից մեկն էր ու թեև նրա հասցեին հնչած բազմաթիվ սպառնալիքներին, նա միշտ մնում էր հանգիստ ու հավասարակշռված:

Հանդես գալով մի շարք ժողովրդավարական պատասխաններում ու հասարակական կազմակերպություններում, Դինքն ընդգծում էր Թուրքիայի ժողովրդավարացման անհրաժեշտությունը, խոսում խոսքի ազատության, Թուրքիայում մարդու, ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին: Նա հայերի ու թուրքերի միջև շատ կարևոր քարոզիչ էր եւ հավատում էր, որ հայ համայնքը հնարավորություն կունենա Թուրքիայում ապրել ազատ եւ չենթարկվել պատմական ճնշումների:

2007 թվականի հունվարի 19-ին, Հրանտ Դինքն սպանվել է Ստամբուլում, իր խմբագրած «Ակոս» թերթի խմբագրատան շենքի դիմաց: Մինչ սպանությունը նա իր հրապարակումներում հայտնում էր, որ իր հասցեին սպառնալիքները հաճախակի են դարձել: Բացի այդ, նա բողոքում էր, թե ոստիկանությունը հրաժարվել է պաշտպանել իրեն հնարավոր մահափորձից:

Դինքի սպանության գործը բացահայտելու համար միջազգային մի շարք կառույցներ բազմաթիվ անգամ կոչ են արել թուրքական իշխանություններին՝ ապահովել անաչառ քննություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2010-ի սեպտեմբերին մեղավոր ճանաչեց Թուրքիային՝ Հրանտ Դինքին չպաշտպանելու համար, չնայած որ հետքնության ընթացքում պարզ էր դարձել, որ թե՛ ժանդարմերիան, թե՛ ոստիկանությունը տեղյակ են եղել նրա դեմ նախապատրաստվող սպանությանը:

Դինքի գործով սկսված շուրջ դատավարությունն ունեցավ ամոթալի ավարտ: Այդպես էլ հայտնի չդարձան սպանության պատվիրատուները, չուսումնասիրվեցին դատարան ներկայացված մի շարք փաստեր եւ վկայություններ: 2011-ի հունվարի 17-ին տեղի ունեցած 25-րդ դատավարության ժամանակ, դատարանն ազատ արձակեց սպանության կազմակերպման մեջ գլխավոր կասկածյալներից Էրիան Թունջելին: Դատարանը միայն դատապարտեց սպանության գործիք հանդիսացած Օզյուն Սամասին՝ 22 տարի 10 ամիս ազատազրկման, իսկ սպանության ուղղորդման մեջ մեղադրվող Յասին Հայալին՝ ցմահ ազատազրկման: Դատական շուրջի զավեշտներից մեկն էլ այն էր, որ դատավճիռ կայացնելուց հետո հաջորդ օրը պարզվեց, որ Դինքի սպանության գործով 19 մեղադրյալներից 18-ի նկատմամբ է որոշում կայացվել:

Դատարանը մոռացել էր մի 19-րդ մեղադրյալի նկատմամբ որոշում կայացրել:

Թուրքիայում դատարանի այս որոշումն ընդունվեց մեծ դժգոհությամբ: Դատարանի կողմից վճիռ կայացնելուց հետո դատարանի մոտ հավաքված հազարավոր մարդիկ սկսեցին բողոքել կայացված անարդար վճիռն դեմ եւ երթով շարժվեցին դեպի «Ակոս»-ի խմբագրություն:

Դատավճիռի հետ կապված Թուրքիայի մշակույթի նախարարը նշեց, թե այն վտանգավոր զարգացում էր: Նախագահ Գյուլը շեշտեց, որ տեսնում է հասարակության դժգոհությունը, արդարադատության նախարարը փորձեց հանգստացել հասարակությանը՝ նշելով, թե դատական գործընթացը չի ավարտվել եւ դեռ կա բողոքարկման փուլ: Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության առաջնորդ Քեմալ Բըլըչդարսոյունը քննադատեց վճիռը՝ ասելով, թե սա էր Հրդոդանի արդարադատությունը:

Չավեշտալի է, սակայն Դինքի սպանության գործով ամոթալի վճիռը կայացրած դատարանի նախագահը հայտարարեց, թե կայացված վճիռը եւս իր սրտով չէ:

Դատավճիռից 1,5 տարի հետո՝ 2013-ի մայիսին, Հրանտ Դինքի սպանության գործով դատավճիռը վճարել 9-րդ դատարանում բեկանվելուց հետո ուղարկվեց Ստամբուլի ծանր հանցագործությունների գործերով 14-րդ դատարան: Այնտեղ արդեն 2013-ի սեպտեմբերի 17-ից վերսկսվեց Դինքի սպանության գործով դատավարությունը: Այսինքն, արդեն 1 տարուց ավել է, ինչ ընթանում է Դինքի սպանության դատավարությունը, սակայն կրկին արդյունքներ չկան: Պարզապես այս ընթացքում ձերբակալվել եւ կայանվել է նախորդ դատավճիռով ազատ արձակված Հրիան Թունջելը: Նա վերսկսված դատական նիստերից մեկի ժամանակ սկանդալային հայտարարություն էր արել՝ պնդելով, թե Դինքի սպանությունն իրականացրել է «Էրգենեկոն»-ից ավելի բարձր կազմակերպություն, որի անդամներին պետությունը աշխատավարձ է տալիս:

Այս ընթացքում հետաքրքիր զարգացում էր այն, որ Թուրքիայի արդարադատության նախարարը թույլատրեց դատական պատասխանատվության կանչել պետական պաշտոնյաներին, ովքեր ինչ-որ առումներով կապված են Դինքի սպանության հետ:

Այդ համատեքստում արդեն հարցաքննվել են բարձրաստիճան պաշտոնյաներ եւ ձերբակալվել ոստիկաններ:

Այսօր՝ հունվարի 19-ին, Ստամբուլում Հրանտ Դինքի մահվան 8-րդ տարեկիցի կապակցությամբ մի շարք կազմակերպություններ նախաձեռնել են սգո եւ բողոքի միջոցառումներ:

Անդրանիկ Բասիրյան

Հրանտ Դինքի մահվան 8-րդ տարեկիցի կապակցությամբ հավաք եւ լուռ քայլերթ Երեւանում

19.01.2015

«Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի մահվան 8-րդ տարեկիցի կապակցությամբ այսօր՝ հունվարի 19-ին, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, կլինի հավաք, այնուհետեւ լուռ քայլերթ: Այս մասին Facebook սոցիալական կայքում բացվել է միջոցառման իրազեկման էջ:

«Արդեն 8 տարի է անցել այն օրվանից, երբ Հրանտ Դինքը սպանվեց իր իսկ թերթի խմբագրության առջ: 2007-ից մինչ 2015-ն ընկած ութ տարիների անցան արդարության սպասումով ու պահանջով: Ավելին, այս նույն սպասումով ու պահանջով է անցել նա 1915-ին հաջորդող հարյուրամյակը: Ժամը 17:00-ին կհավաքվենք Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, որտեղից էլ կսկսվի լուռ քայլերթ դեպի Օպերա: Սա Հրանտ Դինքի հիշատակին նվիրված առաջին հանրային արարողությունն է Երանում, հույս ունենք, որ շատերը կմիանան մեզ»,- ասված է խմբում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Դավութօղլուն կոչով դիմել է բոլոր հայերին

20.01.2015



Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուն Հրանտ Դինքի սպանության 8-րդ տարեկիցի հետ կապված հայտարարություն է տարածել՝ կոչ անելով հայերին նոր սկզբի հիմքեր դնել:

Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուի՝ Հրանտ Դինքի մահվան 8-րդ տարեկիցի հետ կապված ուղերձում նշել է. «Արդեն 8 տարի է, ինչ մեզ հետ չէ Հրանտ Դինքը, ով փորձում էր իր զգացումներով եւ մտքերով լուսավորել Օսմանյան կայսրությունից Թուրքիայի հանրապետությանն անցած կարելու խնդիրներից մեկը: Դինքի հարգարժան ընտանիքին եւ բոլոր նրանց, ովքեր սիրում են Դինքին, համբերություն ենք մաղթում: Հրանտ Դինքը Անատոլիայի թանկարժեք մի մտավորական էր, ով ճանապարհներ էր փնտրում հայերի եւ թուրքերի համատեղ ապագան կառուցելու համար:

Այս համատեքստում, հայ-թուրքական բարեկամությանը հավատացող բոլորին հրավիրում ենք նոր սկզբի համար աջակցություն ցույց տալ եւ ուզում ենք դիմել բոլոր հայերին. Թուրքիան նախկինում էլ հայտարարել էր, որ պատերազմի պայմաններում ստիպված է եղել կիրառել պարտադիր գաղթի քաղաքականություն, որի պատճառով ոչ մարդկային հետեւանքներ էին եղել: Թուրքիան կիսում է հայերի ցավը ու վճռական ջանքեր գործադրում երկու ժողովուրդների միջև կրկին զգացմունքային կապեր ստեղծելու համար: Մեր հարաբերությունները պատանդ վերցրած թշնամանքը հաղթահարելու համար եւ գլխավորապես երկխոսության միջոցով շարժվելու անհրաժեշտության մասին ամենավճռական արտահայտությունը 2014 թվականի ապրիլի 23-ի ցավակցական ուղերձն է: Ժամանակը, որ կանգ է առել 1915-ին, կշարունակվի, երբ մեծ տրամվան հետեւում թողնելու ճանապարհով տաքումները քանդվեն: Թուրքիան իր անունից այդ կետը հաղթահարել է:

Հնարավոր է, որ երկու տեղաբնիկ ժողովուրդներ հասնեն միմյանց հասկանալու եւ միասին ապագային նայելու հասունությանը: Մի աշխարհագրական վայրում ապրող եւ երկար ժամանակ պատմությունը կիսող հայերը եւ թուրքերը բոլոր հարցերը միայն իրար մեջ կարող են խոսել, լուծման ճանապարհներն էլ միասին կարող են փնտրել: Այս պատճառով անհրաժեշտ է, որ փոխադարձ վստահության եւ համագործակցության հասկացությունը զարգացնենք, 800 տարվա համատեղ պատմության լույսի տակ միմյանց նորից ճանաչենք եւ մարդկային հարաբերությունների մեջ լինենք: Դրա համար մեր հայ բարեկամներին հրավիրում ենք ավելի

շատ այցելել Թուրքիա՝ փոխադարձ կարծրատիպերը վերացնելու համար:
Կիսել ցավերը, վիրակապել վերքերը եւ կրկին կարողանալ ստեղծել բարեկամություն: Մեր անկեղծ ցանկությունը սա է»,-ասել է Դավութջոյուն:
Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրք ոստիկանը պնդել է, թե իրեն օգտագործել են Դինքի սպանության գործում

23.01.2015



Ստամբուլի հայկական «Ակոս» շաբաթաթերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության գործով ձերբակալված առաջին ոստիկաններից Մուսիթին Չենիթը պնդել է, թե Դինքի սպանության գործում իր «գլխին սարքել են» իր հրամանատարները:

Թուրքական Radikal պարբերականի փոխանցմամբ՝ Տրապիզոնի ոստիկանության հետախուզության վարչության ոստիկան Մուսիթին Չենիթը նշել է, թե Դինքի սպանության օրը իրենց վարչության պետերից Ալի Ֆուաթ Յըլմազերը, Էնգին Դինչը, Ֆարուք Սարը եւ Էրջան Դեմիրը ստիպել են իրեն զանգել հետախուզության գործակալ Էրհան Թունջելին եւ գրուցել: Նա պնդել է, թե իր հրամանատարները մեղքը իր վրա են բարդել եւ դրանով ազատվել են պատասխանատվությունից:

Ավելի ուշ, հաջորդ ձերբակալված ոստիկանապետ Էրջան Դեմիրին հարցաքննության ժամանակ հիշեցրել են Մուսիթին Չենիթի խոսքերը, ինչին ի պատասխան, նա պնդել է, թե այդ ամենը սուտ է:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ֆրանսիական «L'Histoire» ամսագիրը ներկայացրել է Հայոց ցեղասպանության սցենարը

23.01.2015



Հայոց ցեղասպանության հարյուրամյակի կապակցությամբ ֆրանսիական հեղինակավոր «L'Histoire» ամսագրի հերթական համարը լույս է տեսել «Հայեր. 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» խորագիրը կրող 50-էջանոց ծավալուն հոդվածաշարով:

Ամսագրի էջերում տեղ են գտել Հայոց ցեղասպանության վերաբերյալ հետազոտողների եւ պատմաբանների հեղինակած հոդվածներ, որոնք ուղեկցված են ինֆոգրաֆիկայով եւ փաստավավերագրական կադրերով: Ֆրանսահայ պատմաբան Ռայմոն Հարություն Գեւորգյանի «Մի բնաջնջման սցենար» ծավալուն հոդվածը ներկայացնում է հայերի հանդեպ գործած ոճրագործության սցենարը՝ փաստական վերլուծության ենթարկելով մտահղացման, ծրագրման, հրամանի, դրա իրականացման փուլերը, արդյունքները, ինչպես նաեւ հայերի ջարդերի եւ տարհանման քարտեզը: Ֆրանսիայի գիտահետազոտական ազգային կենտրոնի տնօրեն Ֆրանսուա Ժորժոնի հետ հարցազրույցում «L'Histoire»-ն անդրադառնում է նախքան Ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում հայ համայնքին եւ դրա դերին: Իսկ հայտնի ցեղասպանագետ Իվ Տերնոնի հետ հարցազրույցը նվիրված է 20-րդ դարի կեսերից սկսած՝ սերունդներ անց Հայոց ցեղասպանության հիշատակի գարթոնքին:

Հոդվածաշարը պարունակում է այլ հոդվածներ նվիրված աշխարհասփյուռ հայության ներկայից պատկերին, Ժան Ժորեսի գլխավորությամբ Ֆրանսիայի հայասերների շարժմանը, ինչպես նաեւ վերջին տարիներին Ցեղասպանության ճանաչման հարցը բարձրացնող թուրք մտավորականներին՝ ներառելով նաեւ Թաներ Աբչյամի «Ինչու՞ Թուրքիան չի բացում արխիվները» հոդվածը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքերը պղծել են Ստամբուլը կառուցած հայ ճարտարապետի գերեզմանը

23.01.2015



Ստամբուլի լավագույն պատմական կառույցների հեղինակ հայագի հայտնի ճարտարապետ կարապետ Պալյանի գերեզմանաքարը հայտնաբերվել է Ստամբուլի շինհրապարակներից մեկում:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս» Ստամբուլը խորհրդանշող Դոմարահչեի պալատի ճարտարապետ Կարապետ Պալյանի գերեզմանաքարը հայտնաբերվել է Ստամբուլի Քարթալի շրջանում մի շինհրապարակում:

Հայտնի չէ, թե որտեղ է եղել Կարապետ Պալյանի գերեզմանը, սակայն Փարս Թուրլաջըի «Պալյան ընտանիք» գրքում 1958 թ.-ին արված մի լուսանկարում երևում է Կարապետ Պալյանի գերեզմանաքարը Բեշիքթաշի հայկական գերեզմանատանը: Թուրլաջըն նշել էր, որ այժմ գերեզմանաքարն իր տեղում չէ:

Ստամբուլի քաղաքապետարանի պատասխանատուները անպատասխան են թողել «Ակոս»-ի հարցը, թե երկար

տարիներ կորած Կարապետ Պայանի գերեզմանաքարն ինչպես է հայտնվել շինհրապարակներից մեկում:



Լուրեր Հայաստանից - NEWS.am

Միջուռք

Միջուռքի ներկայացուցիչները մտադիր են ՀՀ-ում տեղադրել աշխարհի ամենամեծ խաչը

06.01.2015



Եթե հայկական համայնքները Հայաստանում աշխարհի ամենամեծ խաչը տեղադրելու շուրջ համաձայնության գան, ապա երկրի իշխանությունները կարող են աջակցել խաչի տեղադրման տարածքի ընտրության հարցում: Այդ մասին NEWS.am-ին հայտարարեց սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ մեկնաբանելով Ֆրանսիայի եւ Լիբանանի հայկական համայնքների ներկայացուցիչների՝ Հայաստանում աշխարհի ամենամեծ խաչը տեղադրելու մտադրությունը:

Նախարարի խոսքով՝ այս հարցի շուրջ տարբեր կարծիքներ եւ տեսակետներ են հնչում: «Ծրագրի հեղինակները իրենք են որոշում ներդրումների չափը, սակայն սփյուռքի ներկայացուցիչները այդ հարցը սկզբնապես պետք է համաձայնեցնեն Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդի հետ, եթե խաչը Մայր Աթոռում տեղադրելու որոշում ընդունվի»:

Ի պատասխան հարցին՝ ինչպես է նա վերաբերում այս նախաձեռնությանը, նախարարը նշեց. «Այն ամենը, ինչ կապված է քրիստոնեության հետ եւ կնպաստի տուրիզմի զարգացմանը, Հայաստանը կդարձնի ճանաչելի, չի կարող ընկալվել բացասական լույսի ներքո»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հնդկաստանում հայկական եկեղեցին կվերականգնվի Կանանց ակումբի կողմից

12.01.2015



Հնդկական Դիուբրի քաղաքում հայկական եկեղեցին առաջիկայում կվերականգնվի Կանանց ակումբի կողմից, հայտնում է «The Telegraph»-ը:

Եկեղեցին քաղաքի մշակութային ժառանգության 33 օբյեկտներից մեկն է եւ, ըստ ակումբի նախագահ Չանդանա Փոլ Չոուդիուրիի, ակումբը ցանկանում է այն պահպանել ցանկացած գնով:

«Միջոցներ հավաքելը դժվար է, սակայն կփորձենք մեր ուժերի սահմաններում անել ամեն ինչ՝ եկեղեցու վերականգնմանն ու դրանից ոչ հեռու հատուկ շինության կառուցմանն անհրաժեշտ միջոցներ հավաքելու համար, որտեղ աղքատ աղջիկներն ու կանայք տարբեր թրենինգների օգնությամբ կարող են ամրապնդել ինքնագնահատականը»:

Խմբագրության թղթակցի հետ զրույցում ծագումով Դիուբրիից, սակայն ներկայումս Կալկաթայում բնակվող հայտնի դրամագետ Սանքար Կումար Բոսեն ասել է, որ եկեղեցին, հավանաբար, կառուցվել է Օստ-հնդկական ընկերության կառավարման վերջում:

«Երեխա ժամանակ ես եկեղեցու ներսում վառվող յույսեր եմ տեսել: Եվրոպական համայնքի մարդիկ այցելում էին այնտեղ: Այժմ այն կիսավեր է եւ պետք է վերանորոգվի ու պահպանվի», - նշել է նա:

Դիուբրիի բնակիչները պահանջում են, որպեսզի նահանգի կառավարությունը պահպանի եկեղեցին եւ քաղաքի մշակութային այլ հուշարձանները: Հակառակ դեպքում նահանգի փառավոր պատմությունը կկորսվի ժամանակի ընթացքում:

Կանանց ակումբը հիմնադրվել է 1935թ.՝ Դիուբրիի եվրոպացի որոշ բնակիչների կողմից:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Լաս Վեգասում Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան կտեղադրվի

12.01.2015

Հայ-ամերիկյան մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ Լաս Վեգասում Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան կտեղադրվի: Նախաձեռնությանը հավանություն է տվել Լաս Վեգասի Քլարք օկրուգի

հոգաբարձուների խորհուրդը: Հուշարձանը կտեղադրվի Լաս Վեգասի ամենամեծ՝ Մանսեթ այգում: Այս մասին հայտնում է Միրիայում տպագրվող «Գանձասար» թերթը իր «Facebook»-յան էջում:



Հուշարձանի կառուցան, ինչպես նաև ճարտարապետական նախագծման, ապահովագրական հիմնադրամի և շինության անվտանգությունն ապահովելու համար Հայամերիկյան մշակութային կենտրոնը կհատկացնի 200 հազար դոլար:

Նշենք, որ Մանսեթ այգին Լաս Վեգասի ամենախոշոր այգիներից է: Այգու մակերեսը կազմում է շուրջ 57000 քմ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Բաֆֆու ծննդավայրի հայկական գերեզմանը քանդում են գանձագողերը

00:04, 14.01.2015



Իրանի Մալմաստի շրջանի նախկինում հայաբնակ Փայաջուկ գյուղի հայերի գերեզմանները ենթարկվում են գանձագողերի հարձակումներին:

Պարսկաստանի հայկական հոգեւոր ու մշակութային օջախներ այցելած հայաստանցի ուխտավորների խումբը Մալմաստ գավառի նախկինում հայաբնակ Փայաջուկ գյուղի գերեզմանոցում տեսածից բավականին տխրել է, քանի որ ոսկի կամ գանձեր գտնելու հույսով անհայտ անձիք քանդել են պղծել էին թաղված հայերի գերեզմանները: Թեև հայկական գերեզմանատուներ հսկում էին բազմաթիվ հայկական գամփոներ, դա չի խանգարել գանձագողերին անել իրենց սև գործը:

Հայաստանցի ուխտավորներն իրենց մտահոգությունը կիսել են տեղի տուրիստական գործակալությունների տնօրենների հետ: Տեղի տուրիստական ոլորտի պատասխանատուները նշել են, թե իրենք եւս ցավում են, որ նման բան է տեղի ունենում եւ խոստացել տեղի ունեցածի մասին հայտնել


Իրանի մշակույթի նախարարություն եւ խնդրել գերեզմանի պահպանման համար միջոցներ ձեռնարկել: Նշենք, որ Մալմաստի Փայաջուկ գյուղում է ծնվել հայ մեծ գրող Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան): Փայաջուկի հայկական գերեզմանատանը թաղված են նաև Բաֆֆիի բազմաթիվ ազգականներ: Նախկինում ամբողջովին հայաբնակ Փայաջուկում հիմա ընդամենը մեկ հայ ընտանիք է մնացել:



*Լուսանկարների՝ Անուշ Դրամիկյանի
Լուրեր Հայաստանից - NEWS.am*

Ստամբուլի քաղաքապետարանը հայերին դավաճան ներկայացնող ցուցահանդես է բացել

18.01.2015



Ստամբուլի քաղաքապետարանը դեկտեմբերի 22-ից մինչև 2015-ի մարտի 25-ը Թաքսիմի հանրապետական արվեստի ցուցասրահում կազմակերպել է ցուցահանդես նվիրված Առաջին համաշխարհային պատերազմին, սակայն ամբողջովին հայերին դավաճան ներկայացնող ցուցանմուշներից է կազմված:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսը»-ը, թեև Ստամբուլի քաղաքապետարանի ցուցահանդեսը նվիրված է Առաջին համաշխարհային պատերազմին, սակայն ներկայացված ցուցանմուշները՝ գրքերը, թերթերը լուսանկարներն ու փաստաթղթերը հիմնականում թշնամանք ու ատելություն են հրահրում հայերի դեմ:

1908 թվականից Էշրեֆ Էդիփ Ֆերզանի եւ Մեհմեդ Աբիֆ Էրսոյի կոմից հրատատարակվող Sebilürreşad ամսագրի 281-րդ համարում հայերի հանդեպ թշնամանք է սերմանվում. «Ինչպես բոլոր տեղերում, այստեղ եւս մուսուլմանները աղքատության եւ թշվառության մեջ են: Ամբողջ առեւտուրն ու արհեստները հայերի ձեռքն է: Ինչքան էլ, որ հողը մուսուլմանների ձեռքին է, հայերն են իրենց ամբարները լցնում: Մուսուլմաններն աշխատում են բավորների պես, իսկ փողերը հոսում է հայերին»:

Ցուցադրված մի շարք թերթերում էլ հայերը ներկայացված են որպես դավաճաններ: Իսկ օրինակ Tanin պարբերականի 1915-ի օգոստոսի 17-ի հրապարակման մեջ գրել է, թե հայերը Էրզրումի շրջանում մուսուլմանների դեմ կոտորածներ են իրականացնում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Բաղդադում հափշտակված հայկական խաչը հայտնաբերվել է ԱՄՆ-ում

20.01.2015



Թեխասում հաջողվել է հայտնաբերել Բաղդադի հայկական եկեղեցուց գողացված հայկական խաչը:

Բաղդադում գտնվող եկեղեցուց գողացված խաչը զարմանալիորեն հայտնվել է Ֆլորիդա նահանգի գրավատներից մեկում: Գրավատան հետաքրքրասեր աշխատակիցը դիմել է համալսարանի պրոֆեսորին՝ խաչի վրայի գրվածքը թարգմանելու խնդրանքով, հաղորդում է <http://austin.twcnews.com>-ը: Իր հերթին, պրոֆեսորը կապ է հաստատել Թեխասի հայկական համայնքի ներկայացուցիչ Միհրան Հարոյանի հետ:

Այդ նույն ժամանակ նահանգում է գտնվել սարկավագ Նարեկ Կարապետյանը, ում հայրը Իրաքում ծնված հայ է: Նրա խոսքով խաչի վրա հստակ գրված է, որ այն 1945թ. Մերոք Օհանյանը նվիրել է Բաղդադի հայկական եկեղեցուն: Այնուհետև Հարոյանը կապվել է գրավատան հետ եւ խնդրել խաչն ուղարկել Օսթին: Մինչ օրս անհայտ է, թե ինչպես է արձայթա խաչը Իրաքից հայտնվել Ֆլորիդայում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Միջազգային

Անցած տարին՝ հայ-թուրքական հարաբերություններում. Կարեւոր իրադարձությունները

04.01.2015



Հայաստանի եւ Թուրքիայի միջև պաշտոնական շփումները, հայ-թուրքական քաղաքացիական հասարակությունների միջև իրականացված ծրագրերը անցած՝ 2014 թվականին ունեցան նախորդ տարիներից տարբերվող դրսևւորումներ: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում ասել է թուրքագետ, ՀՀ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող Վահրամ Տեր-Մաթեոսյանը՝ ամփոփելով անցած տարվա իրադարձությունները՝ հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում:

«Նախևառաջ, Թուրքիայում այս տարի տեղի ունեցան երկու համապետական ընտրություններ՝ մարտին տեղական ինքնակառավարման, իսկ օգոստոսին՝ նախագահական: Թեև երկու ընտրություններում էլ իշխող կուսակցությունը հաղթանակած դուրս եկավ, սակայն տարին բավական բարդ ստացվեց, թե ներքաղաքական, թե արտաքին քաղաքական առումներով», - նշեց թուրքագետը եւ հավելեց. «Հայաստանի եւ Թուրքիայի միջև պաշտոնական շփումները, հայ-թուրքական քաղաքացիական հասարակությունների միջև իրականացված ծրագրերը այս տարի ունեցան նախորդ տարիներից տարբերվող դրսևւորումներ»:

Ըստ Տեր-Մաթեոսյանի, Հայաստանին եւ հայությանն առնչվող խնդիրների պարագայում, անշուշտ, ուշագրավ քաղաքական քայլ էր Թուրքիայի վարչապետի սպրիլի 23-ի ցավակցական ուղերձը: «Այդ քայլով նա Ցեղասպանության վերաբերյալ թուրքական հասարակության մոտ մոտեցումների նոր նշանոց սահմանեց: Մեկ ամիս անց՝ մայիսի 27-ին, ՀՀ նախագահը բանավոր հայտարարությամբ Թուրքիայի ապագա նախագահին 2015 թ. ապրիլի 24-ին հրավիրեց Հայաստան, որպեսզի «առերեսվի Հայոց Ցեղասպանության պատմության խոսուն վկայություններին»: Օգոստոսի 13-ին Հայաստանի նախագահը շնորհավորեց Էրդողանին Թուրքիայի նախագահ ընտրվելու կապակցությամբ եւ հույս հայտնեց, որ վերջինս իր եռանդը կներդնի «երկկողմ պայմանավորվածություններն առանց նախապայմանների կյանքի կոչելու գործում»: Թուրքիան Հայաստանին ուղարկվեց պաշտոնական հրավեր մասնակցելու Էրդողանի երդմնակալության արարողությանը, որին Հայաստանը մասնակցեց արտգործնախարարի մակարդակով: Գտնվելով Անկարայում՝ Նայբանդյանը Էրդողանի հետ ունեցավ կարճ հանդիպում, նրան փոխանցեց 2015 թ. ապրիլի 24-ին Հայաստան այցելելու արդեն պաշտոնական հրավերը, իսկ Թուրքիայի նորընտիր նախագահը հրավերն ընդունեց ի

գիտություն: Թվում էր, թե պաշտոնական մակարդակում շփումների նոր ձևաչափ է հատուանում, սակայն, Թուրքիան հրաժարվեց շնորհավորել Հայաստանին անկախության տոնի առթիվ, որին էլ հետևեց Հայաստանի համանման արհամարհանքը»:

Թուրքագետի կարծիքով, պակաս կարելու չէր արտգործնախարարների հողվածների փոխանակման փաստը: «Անկարա այցից օրեր անց ՀՀ արտգործնախարարը ֆրանսիական «Le Figaro»-ում տպագրեց քննադատական հոդված՝ ընդդեմ Թուրքիայի իշխանությունների և ցեղասպանության հարցում նրանց որդեգրած քաղաքականության: Այդ հոդվածն, ըստ էության, Ահմեդ Դավութջյուլի կողմից մայիսին տպագրված հոդվածի պատասխանն էր: Մի քանի շաբաթ անց էլ՝ սեպտեմբերի 24-ին, ՄԱԿ-ի բարձր ամբիոնից Հայաստանի նախագահը քննադատեց Թուրքիայի իշխանություններին և ուղարկեց «գրողի ծոցը»: Անցնող տարվա վերջին ուշագրավ գարգացումը հայկական արմատներով էլջեն Մահյուսյանին վարչապետի խորհրդական նշանակելու քայլն էր ու դրա շուրջ տարաբնույթ քննարկումները և շահարկումները»,- ամփոփեց Վահրամ Տեր-Մաթեոսյանը: Լուրեր Հայաստանից - NEWS.am

Սրբերի մի բանակ . իսպանական պարբերականի անդրադարձը Հայոց Ցեղասպանությանը

08.01.2015



Իսպանական հեղինակավոր Libertad Digital պարբերականը ծավալուն հոդված է հրատարակել Հայոց Ցեղասպանության 100-ամյակի վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք հոդվածի ամբողջական թարգմանությունը. «2015, կոտորածի առաջին հարյուրամյակը»

Սրբերի մի բանակ. Հայոց Ցեղասպանության 1.5 միլիոն զոհերը կարբացվեն

Իտալիեր Լուսանո

Մոռացված կոտորած է եղել: Տարբեր բնագավառներում ջանքեր են գործադրվել այդ ցեղասպանություն ժխտման և դրա պատգամը տանողին հետապնդելու ուղղությամբ, ով ցանկանում էր, որ պատմությունը չմոռացվի: Կոտորած էր, որը 20-րդ դարում հետք թողած ամենագարհուրելի հանցագործությունների մի շղթայի սկիզբ դրեց՝ Խորհրդային միության միլիոնավոր հանցագործությունների, հրեական Հոլոքոստի, կարմիր կլամերների կոտորածի...

Դրանցից առաջինը եղավ հայոց ցեղասպանությունը: Մեկնարկող 2015 թվականին լրանում է կոտորածի առաջին հարյուրամյակը, որը թուրքերի ձեռքով վերջ դրեց 1.5 միլիոն քրիստոնյա հայի

կյանքի: Պատմության սև էջ, որը Թուրքիան ոչ միայն չի համաձայնում ճանաչել, այլև արգելում է օրենքով խոսել հակառակը:

Մոռացված ոճրագործությունից մեկ դար անց Հայոց Ցեղասպանությունը ծառայում է օրինակ այն իրականության, ինչն այսօր գոյություն ունի մեր աշխարհում: Տարբերություններ մի կողմ թողնելով, էթնիկական և կրոնական գոտումները, որոնք այս պահին իրականացնում է Իսլամական Պետությունը և քրիստոնյաների հետապնդումը մահմեդական աշխարհում որոշ չափով հիշեցնում է այն, ինչ այն ժամանակ տեղի ունեցավ, և այն, ինչ կարող է տեղի ունենալ չարին չհակազդելու դեպքում:

Հայերը, քրիստոնեական հավատքն ընդունած առաջին ժողովուրդներից մեկը և պատմության առաջին քրիստոնյա պետությունը, ջանքեր չեն խնայել ինչպես իրենց հազարավոր նահատակներին: Հիշելու և աշխարհին պատմելու այն, ինչ այն ժամանակ տեղի ունեցավ: Այդպես է վարվել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ իր հրովարտակի միջոցով:

Սրբերի մի բանակ

Հրովարտակում ներկայացվում է մի փաստ, որը մինչ օրս անհայտ էր և ինչ որ տեղ՝ զարմանալի: Գալ ապրիլի 23-ին կարբացվեն ցեղասպանության զոհերը: Կկայանա միջոցառում, որի ժամանակ հայոց եկեղեցու համար Մուրք կհայտարարվեն մոտ 1.5 միլիոն քրիստոնյա հայեր: Պատմական փաստ, որին նաև կմիանա նրա քույրը՝ կաթոլիկ եկեղեցին: Պաշտոնական հաստատում դեռ չի եղել, սակայն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը Մուրք Պետրոսի հրապարակում ապրիլի 12-ին կմատուցի պատարագ այս ահռելի ջարդի նահատակների հիշատակին:

Իր պատմական հաղորդագրությունում, Կաթողիկոս Գարեգին Բ-ն հայտարարում է, որ ապրիլի 23-ին կնախագահի այն ձեռք, որով սուրբ կհռչակվեն Ցեղասպանության բոլոր զոհերը, ովքեր «սպանվել են հավատի և հայրենիքի համար», իսկ հաջորդ օրը կլինի «Ցեղասպանության սուրբ նահատակների» հիշատակի օր: Ցեղասպանությունը սկսվեց 1915 թվականին և տևեց բազում տարիներ, սակայն մինչ այդ էլ հայերը թիրախ էին: Ջարդերը տեղի ունեցան Օսմանյան կայսրության վերջում սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի օրոք և դրանց իրագործումը շարունակվեց այսպես կոչված «երիտթուրքերի», իսկ ավելի ուշ, Քեմալ Աթաթուրքի՝ ներկայիս Թուրքիայի հոր կողմից:

20-րդ դարի առաջին մեծ ցեղասպանությունը

Հայերը հայտնվեցին թիրախում բազում պատճառներով՝ քրիստոնյա էին, կրթված, մեծ հասարակական ներգրավվածություն ունեին և բացի դրանից պատկանում էին միջին խավին: 1915 թվականին թուրքերը սկսեցին փակել նրանց դպրոցները, նրանց եկեղեցիները և նրանց բոլոր կենտրոններն ու կազմակերպությունները:

Այդ կետից անցում կատարվեց ֆիզիկական բռնությանը և նվաստացմանը: Շատերն այդ ժամանակ սպանվեցին: Չանգվածային կերպով վրա հասան վտարումներն անսպասու, որտեղ շատերը զոհվեցին: Հետո հասավ ընդհանուր գերեզմանատների հերթը: Հարյուրավոր այլ հայեր զոհվեցին հրդեհի մատնված գնացքներում: Ընդհանուր առմամբ, 1.5 միլիոն հայ ոչնչացվեց: Կան հայեր, ում հաջողվեց կենդանի մնալ Լիբանան, Միջիա, կամ այն ժամանակ Խորհրդային Միության մաս կազմող ներկայիս Հայաստան հասնելու շնորհիվ:

Այսօր հայ ժողովուրդը սփռված է աշխարհով մեկ: Գոյություն ունի մեծ սփյուռք: Երեք միլիոնից քիչ ավել ապրում են այն տարածքում, որը ներկայիս Հայաստանն է, մինչդեռ կան այլ 9 միլիոն հայեր՝ սփռված ամբողջ աշխարհով: Ընդհանուր առմամբ աշխարհում ապրում են 12 միլիոն հայ և մեկ դար առաջ գրեթե երեք տարվա ընթացքում սպանվեցին ավելի քան մեկ միլիոն ու կեսը:

«Ընտրեցին մահը՝ հավատից հրաժարվելու փոխարեն»

Հայոց Կաթողիկոսը հաստատում է իր հրովարտակում, որ «2015 թվականի ամեն մի օրը կլինի հիշատակի և նվիրման օր մեր ժողովրդի համար, ճանապարհորդություն մեր նահատակների հիշատակներով և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում, որոնց առաջ

համեստորեն կխոնարհվենք աղոթքով, խաղաղություն աղերսելով մեր անմեղ գոեթի հոգիների համար, որոնք հանգչում են անանուն շիրիմներում, քանի որ **ընտրեցին մահը հավատից հրաժարվելու փոխարեն**»;

Գարեգին Բ-ն նաև հիշատակում է բոլոր նրանց, ովքեր չեն լռել նման անմարդկային բռնության մասին: «Հայտնում ենք մեր երախտագիտությունը այն պետություններին, կազմակերպություններին և անհատներին, որոնք քաջություն են ունեցել և վստահություն ճանաչելու և դատապարտելու Հայոց Յեղասպանությունը: Հայտնում ենք մեր երախտագիտությունն այն բարեկամ պետություններին և ժողովուրդներին, որոնք որպես քույրեր և եղբայրներ ընդունել են մեր հողի զավակներին: Արդարության և մարդասիրության այդ օրինակները մարդկության պատմության լուսավոր էջեր են: Նրանք սերնդե-սերունդ միշտ կհիշվեն և կգնահատվեն»:

Որպես ամփոփում, Կաթողիկոսը հայացք է նետում ապագային. «Քեղուն դարձնենք մեր դարը՝ արժևորելով մեր անցած ուղին և մեր ժողովրդի վերածնունդը, որպեսզի մեր զավակները, ճանաչելով իրենց պապերի և ծնողների՝ ապրելու և ժողովրդի ու հայրենիքի համար իրենց ուժերը ծառայցնելուն ուղղված հերոսական կամքը, կարողանան ստեղծել լուսավոր նոր օր մեր Հայրենիքի և աշխարհով սիրված մեր ժողովրդի համար: Մեր նահատակների հիշատակը վերածենք ուժի և եռանդի մեր հոգևոր և ազգային կյանքի համար և Աստուծո ու բոլոր մարդկանց առաջ լուսավորենք մեր ճանապարհը՝ ուղորդելով մեր քայլերը դեպի արդարադատություն և մեր սուրբ նպատակների իրականացում»:

Թեհրանին 4000 տարով «ծերացրել են» 16.01.2015



Թեհրանի Մուլավի փողոցում անցկացված հնագիտական պեղումները ստիպել են վերանայել Իրանի մայրաքաղաքի պատմությունը: Նախկինում համարվում էր, որ մարդիկ այդ վայրերում բնակություն են հաստատել 3 հազար տարի առաջ: Սակայն Թեհրանի շուկայի տարածքում հայտնաբերված կմախքը գիտնականներն ավելի հին են համարում. այն թվագրվում է մ.թ.ա. V հազարամյակով:

«Այս գտածոն բացառիկ է, քանի որ ապացուցում է, որ 7 հազար տարի առաջ մարդիկ են ապրել այն վայրում, որտեղ հիմա Թեհրան քաղաքն է», - պատմել է հնագիտական խմբի ղեկավար Մոհամմադ Էսմայիլ Էսմայիլի Ջոյուդարը:

Կմախքը Թեհրանում երբեմն հայտնաբերված ամենահին գտածոն է: Ըստ «Իմ մոլորակը» պարբերականի, հետաքրքիր է, որ Թեհրանում պեղումները սկսվել են այն քանից հետո, երբ հնագիտական ինստիտուտի մի ուսանողուհի Մշակութային ժառանգության կազմակերպություն մի քանի կավե իր է բերել, որոնք պատահաբար հայտնաբերել է Մուլավի փողոցի կյուրաջերում:

Նրա հայտնագործությունը հետաքրքրել է հնագետներին, ինչից հետո այնտեղ պեղումներ են սկսել և հնագույն մարդու կմախք, ինչպես նաև արժեքավոր այլ գտածոներ են հայտնաբերել:

Հնագիտական պեղումների ղեկավարը հայտարարել է, որ հետազոտությունների արդյունքում հայտնաբերված կմախքն ուղարկվելու է Իրանի ազգային թանգարան և ցուցադրվելու է հանրությանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հասարակական

Դր. Էդիկ Բաղդասարյան ՀՄՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՆԻՖԵՍՏ

(Ծրագրային Հայտարարություն՝ Առաջարկ)
2014 Տորոնտո – Կանադա
ISBN: 978-1-927860-27-4

Սկիզբը նախորդ համարից

Հայկական հարցի սկզբնավորումը և զարգացումը պատմության ընթացքում

Ինչպես արդեն նշել ենք «Արեւելյան հարց» ասելով հարկ է նկատի ունենալ Արեւելյան ժողովուրդների պահանջներն ու իրավունքները միջազգային քաղաքականության ոլորտում: «Արեւելյան հարցի» բովանդակությունը պայմանավորված է եղել, մի կողմից պատմական տվյալ ժամանակաշրջանում անկախության համար արեւելյան ժողովուրդների մղած պայքարի հասունության մակարդակով, մյուս կողմից, այն դերով, որ հատկացնում էին նրան մեծ տերությունները՝ Արեւելքում գերիշխող դիրք գրավելու համար գործադրած իրենց դիվանագիտությամբ: «Հայկական հարցը» լինելով «Արեւելյան հարցի» անբաժանելի մասը մի կողմից բացատրվում է իր կորցրած ազգային պետականության վերականգնումով, իսկ մյուս կողմից ազգային տարածքների միավորմամբ ու ամբողջականությամբ, իսկ հալ ժողովրդին յուրահատուկ սարսափելի իրադարձության՝ հայկական կոտորածների և գլխավորապես հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումով ու փոխհատուցմամբ:

Հայոց պատմության մեջ ամենախոշորագույն իրադարձությունը, որը ըստ մեզ՝ հիմք ծառայեց «Հայկական հարցի» սկզբնավորման համար, եղել է Հայաստանի առաջին բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմի կայսրության միջև:

Ինչպես գիտենք դեռևս Վարազդատի օրոք, 375-376 թթ. և ապա 383-384 թթ. պարսկահռոմեական դիվանագիտական շրջաններում սկսում է շոշափվել Հայաստանի խնդրի լուծման նոր ուղի՝ երկրի բաժանումը երկու պետությունների միջև: Նոր Կայսր՝ Թեոդոսը և Պարսից արքա Շապուհ Գ-ը համաձայնության են գալիս 387 թվականին:

Հայաստանը բաժանվում է երկու անհավասար մասերի՝ արեւմտյան գավառները՝ Կարին, Նիկեդիք, Դերջան, Մանանդի, Դարանադի, Խորձյան, Մզուր և այլ շրջաններ անցնում են Հռոմին, իսկ մնացած ամբողջ երկիրը՝ Մեծ Հայքի երեք քառորդը՝ Պարսկաստանին: Արշակ Գ-ը տեղափոխվում է հռոմեական մասը և այնտեղ թագավորում է և երկու տարի: Պարսկական մասում նոր թագավոր է կարգվում Խոսրով Գ-ը՝ նույն Արշակունի տոհմից: Արշակ Գ-ի մահվանից հետո հռոմեացիները նրան հաջորդող չեն նշանակում, այլ երկրամասը դարձնում են իրենց պետության նահանգներից մեկը, հռոմեական նահանգապետի կառավարման ներքո:

Այսպիսով Հայկական հարցի երեք տարրերից այսինքն Տարածքային ամբողջականություն, ազգային պետականություն և կոտորածներից երկուսը իրականություն է դառնում և Հայաստանը կորցնում է իր միասնական պետականությունը և տարածքային ամբողջականությունը, որը առաջանում է Արեւելք-Արեւմուտք հակամարտության արդյունքում, որը և մենք համարում ենք Արեւելյան հարցի ամենակարեւոր պատմական բաղադրիչներից մեկը:

428 թ. վերանում է Հայոց ազգային պետականությունը Արեւելյան Հայաստանում, որը հանդիսանում է Հայկական հարցի հաջորդ փուլը, Հայ ժողովուրդը կորցնում է ոչ թե միայն իր հարեւնիքի տարածքային ամբողջականությունը, այլև Հայրենիքի մի հատվածի Արեւելյան Հայաստանի հայկական պետականությունը, այնինչ նրան պարտավորում է դարձրել շարունակ մաքառել նրա վերականգնման համար:

Հույս Ամսագիր



Հայաստանը 387-428 թթ.

Հայկական հարցը ավելի է խորանում հետագայուն, երբ 591 թ. Պարսկաբլուզանդական հաշտության պայմանագրով տեղի է ունենում Հայաստանի երկրորդ բաժանումը:

Հայ ժողովրդի պայքարը Հայկական հարցի բազմաթիվ երկու տարրերի տարածքային ամբողջականության ու ազգային պետականության վերականգնման ուղղությամբ իր զրական արդյունքն է ստանում Զրդ դարի երկրորդ կեսում Բագրատունյաց թագավորության հիմնադրմամբ: Սակայն երբ այդ պետականությունը վերանում է 1045 թ. Բյուզանդական-արաբական-թուրք-սելջուկական հակամարտության հետեանքով, «Հայկական հարցը» կրկին օրվա առարկա է դառնում, որը, դարեր շարունակ լուծում չի ստանում մինչև 20-րդ դարի սկիզբը: Թեև պատմական հայրենիքից դուրս 1080 թ. ստեղծվում է Կիլիկիայի հայկական իշխանությունն ու ապա թագավորությունը, սակայն նա չի լուծում Հայկական հարցը իր ամբողջական տարրերով:

Հայկական հարցը ավելի է խորանում 1424 թ. երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը վերանում է իսկ Մայր հողը՝ Հայաստանը 1555 թ. բաժանվում է այս անգամ Սեֆյան Պարսկաստանի եւ Օսմանյան Թուրքիայի միջև: 1555 թվականի մայիսի 26-ին կնքվել է Ամասիայի հաշտության պայմանագիրը, որով վերահաստատվել է 1514 թվականի (Չալդրանի ճակատամարտից հետո) Հայաստանի բաժանումը. Արևմտյան Հայաստանը, ներառյալ Բագրևանդն ու Վասպուրականը, մնացել է օսմանյան, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ: Թուրքիային են անցել նաև Արևմտյան Վրաստանը, արաբական Իրաքը՝ ներառյալ Բաղդադը, իսկ Պարսկաստանին՝ Արևելյան Վրաստանը և Այսրկովկասի արևելյան մասը: Կարսի շրջանը հայտարարվել է «չեզոք գոտի», իսկ բերդն ավերվել է:

1639 թվականին կնքված «Կարսի Շիրինի» (Կարե-Շիրին) պայմանագրով մասնակի փոփոխություններով վերահաստատվել են 1555 թվականի Ամասիայի պայմանագրով նշված սահմանները: Հայաստանը կրկին վերաբաժանվել է 2 տերությունների միջև՝ հետևյալ սահմանագծով. Զավաթքի լեռներից Ախուրյանի հոսանքով հասել է Արաքս գետ, թեքվել արևմուտք, ապա՝ Հայկական Պարի ջրբաժան գծով, Մասիսների գագաթներով ձգվել մինչև Վասպուրականի լեռները, Զագրոսի լեռնաշղթայով անցել թուրք-պարսկական այժմյան սահմանագծով: Այս սահմանը գրեթե անփոփոխ է մնացել մինչև 1828 թ., երբ Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացել է Ռուսաստանին: Պայմանագրին հաջորդած 80-ամյա խաղաղությամբ Արևելյան Հայաստանի տնտեսությունը որոշ աշխուժացում է ապրել, բայց Արևմտյան Հայաստանում շարունակվել է քաղաքումը:

(Շար. 2)

Խոհեր

Մեր Անցած Ճամփան

Թ. Ղարախանյան Միրակցի

Այս հանդիպումները շատ երկար շարունակվեցին եւ այդ հանդիպման օրերը, երբ Ջուղայում քույրազույսի ՎԻՇԵ մեքենա կնատեի, որ պիտի Սպահան քաղաքում Գնդապետ Մոդաղախին հանդիպեի, լցվում էի վառվուռն հույսերով եւ ինչպես մի գույնզգույն փուչիկների խումբ՝ երկինք բարձրանում, բայց հենց նույն օրվա վերջը, երբ լուռ ու մուսն Գնդապետենց տնից քայլում էի դեպ Զարբախ Դառվազե Դոլաթ ՎԻՇԵ միքենաների կանգառ եւ Ջուղա վերդառնում իջնելով հենց այն Քույրազույսին, որ առավոտը ՎԻՇԵ էի նստել ...այստեղ ինձ թվում էր որ երկինք բարձրացող գույնզգույն փուչիկները պայթում էին եւ նույնիսկ զգում էի որ պայթելու ձայներ եմ լսում եւ նորից հուսահատվում:

Օրվա եղելությունները շարժապատկերի նման մտքովս անցնում էին եւ պաշտոնյաների դեմքը եւ հիշում խոտտումը ...« Մեր մասնաճյուղը ջանացողություն կանի մի հարմար տեղ գտնի եւ քեզ վարձատրի», էլի ինքս ինձ նախատում էի իմ վատատեսության համար եւ լցվում էի նոր հույսերով եւ մեկնելով պապոնցս տուն Թաթելոս մեծ պապիս եւ Եղիսապետ մեծ մամիս ուրախացնելու համար, մանրամասնորեն կպատմեի այդ օրվա հանդիպումից նույնիսկ պաշտոնյաների անունը տալով եւ իրենք էլ ինչպես միշտ լավատեսություն էին ներշնչում բայց ինքս անձամբ կես լավատես էի, կես մտահոգ, բայց ամեն անգամ այս պահին հասնելով երագում էի մի օր էլ ուրախ-ուրախ Ջուղայի առվագլխի ՇԵՔԱՐՉԻԱՆ խանութից մի քիչ քաղցրեղեն ասնեմ եւ վազեմ պապոնց տուն եւ բղավելով ասեմ. «պապ, մամ, հորքուրներ, զագառներ... կառավարության մոտ վարձվել եմ, ես էլ ուրախանամ դուք էլ»:

